



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 02(316) 09.02.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
|----|---|----|
| | ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 03 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 1-Ն որոշումը..... | 2 |
| 04 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2017-2019 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 3-Ն որոշումը..... | 23 |
| 05 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N615-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 49-Ն որոշումը..... | 37 |
| 06 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 51-Ն որոշումը..... | 38 |
| 07 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 58-Ն որոշումը..... | 40 |
| 08 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 59-Ն որոշումը..... | 41 |
| 09 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 60-Ն որոշումը..... | 42 |
| 10 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 61-Ն որոշումը..... | 43 |
| 11 | «Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 71-Ն որոշումը..... | 44 |
| | ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 12 | ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ N 0257/02/16թ. որոշումը..... | 45 |
| 13 | ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ N 0273/02/16թ. որոշումը..... | 51 |
| 14 | ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ N 0006/04/15թ. որոշումը..... | 56 |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունվարի 2017թ.

N 1-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի ՆՀ-40 հրամանագրով սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և նրան ենթակա այլ գործադիր մարմինների գործունեության կազմակերպման կարգի 21-23-րդ և 25-րդ կետերին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին՝ անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի կատարման ապահովման նկատմամբ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Նպատակը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|--|---|--|------------------|---------------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ԼՂ առողջապահության նախարարություն | | | | |
| 1 | «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂ օրենքի նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Օրենսդրական դաշտի կատարելագործում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 2 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 16-ի N 197-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում նոր պահանջարկ ունեցող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ավելացում, ծավալվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների իրավական կարգավորում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 3 | «Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության տրամադրման կարգը և այդ գովազդին ներկայացվող պահանջները հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 15-ի N 5 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության ընթացակարգերում առկա օրենսդրական բացերի վերացում, դեղերի, բուժտեխնիկայի և բուժական ոլորտում անբարեխիղճ, թյուր տեղեկություններ պարունակող գովազդի տարածման կանխարգելում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 4 | «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու, անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ ճանաչելու, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերի կանոնակարգում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 5 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2018 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերին հավանություն տալու մասին» ԼՂ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Առողջապահության համակարգի 2018 թվականի նպատակների ու խնդիրների իրականացում | Չորրորդ եռամսյակ | ԼՂ պետական բյուջե |
| ԼՂ արդարադատության նախարարություն | | | | |
| 6 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂ կառավարության | Մատուցվող ծառայությունների սպասարկման որակի բարելավում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|--|--|---|------------------|---------------------------------------|
| | որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | | | |
| 7 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Գործող օրենսդրության հետևողական կատարելագործում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 8 | «Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքների նախագծերը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Պարտապան ֆիզիկական անձանց վերջին կացարան ունենալու հնարավորության իրավունքի ապահովում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 9 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Մասնավոր իրավահարաբերությունների ժամանակակից մոտեցումների համապատասխանեցում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 10 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Քաղաքացիների սպասարկման համար բարենպաստ պայմանների ստեղծում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն | | | | |
| 11 | «Դիվանագիտական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Դիվանագիտական ծառայության համակարգի զարգացում, աշխատակիցների մասնագիտական առաջխաղացում և շահագրգռվածության բարձրացում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | | | |
| 12 | «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժի հաշվարկման պայմանների հստակեցում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 13 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 722 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հստակեցում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 14 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 259-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 261-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի N 328-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 504-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 663-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկման ապահովում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|----|---|--|------------------|---------------------------------------|
| 15 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկման ապահովում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 16 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 29-ի N 488 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Փորձաքննական գործընթացի բարելավում և փորձաքննության կարգի հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 17 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 34 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ամենամսյա դրամական օգնության իրավունք ունեցող անձանց կատեգորիաների և դրամական օգնություն նշանակելու համար ներկայացվող փաստաթղթերի հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 18 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 906-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Կենսաթոշակների վճարման (կանխիկ և անկանխիկ) գործընթացի հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 19 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 902-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի՝ չվճարված ամիսների գումարների վճարման պայմանների հստակեցում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 20 | «Երեխայի իրավունքների պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագիրը և ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված սոցիալական ծրագրերի ընդլայնում և իրականացման արդյունավետության բարձրացում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 21 | «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագրին և ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բարելավում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 22 | «Զբաղվածության կարգավորման 2018 թվականի պետական ծրագրին և ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-15-րդ հոդվածների պահանջների կատարում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 23 | «Սոցիալական աջակցության մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում՝ սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 24 | «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն ուղղված քաղաքականության իրականացում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

| | | | | |
|---------------------------------------|---|---|------------------|---------------------------------------|
| 25 | «Այգեգործության զարգացման 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Պտղատու նոր այգիների հիմնադրմամբ պտղաբուծության զարգացման համար նախադրյալների ստեղծում, ներմուծվող պտղատեսակների զգալի մասի փոխարինում տեղական մրցունակ արտադրանքով, պտղի նկատմամբ ինքնաբավության մակարդակի բարձրացման խթանում, արտադրության ծավալների ավելացմամբ վերամշակման ճյուղի զարգացում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 26 | «Գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ցանքաշրջանառության մեջ ճիշտ ընտրված մշակաբույսերի մշակության շնորհիվ հողի ֆիտոսանիտարական վիճակի բարելավում, էռոզիայից պահպանում, հողում օրգանական նյութերի քանակի ավելացում և ֆիզիկական հատկությունների վրա դրական ազդեցություն, որը կկրի հողապաշտպան բնույթ և պայմաններ կստեղծի հողի արդյունավետ բերրիության պրոգրեսիվ աճի և կայուն բերքատվության ապահովման համար | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 27 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման ծրագրի խթանում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 28 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Մնդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված դրույթների իրագործման ապահովում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 29 | «Խոշոր եղջերավոր կենդանիների մսուրային պահվածքի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Կուլտուրական անասնաբուծության խթանում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 30 | «Ձվի անասնաբուծության փորձաքննության կարգը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Անասնաբուծության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված դրույթների իրագործման ապահովում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարություն | | | | |
| 31 | «Չափումների միասնականության ապահովման մասին», «Հավատարմագրման մասին», «Ստանդարտացման մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Համապատասխանության գնահատման մասին» ԼՂՀ օրենքների նախագծերը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Որակի ենթակառուցվածքների օրենսդրական դաշտի ներդաշնակեցում միջազգային ստանդարտներին և Հայաստանի Հանրապետության իրավական դաշտին | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 32 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2017 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2017 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների կատարման ապահովում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|---|---|--|------------------|---------------------------------------|
| 33 | «Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումների շարունակականության ապահովում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 34 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտահանման խթանման միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեղական արտադրանքի առաջնորմ արտաքին շուկայում և արտահանման ծավալների աճի խթանում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 35 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող թվային հեռուստատեղի հաղորդումների հեռարձակման գծով ծառայությունների գնման պետական պատվերի մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թվային հեռուստատեղի հաղորդումների սոցիալական փաթեթի հեռարձակման ապահովում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 36 | ««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Տրանսպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 37 | ««Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Մատուցվող հյուրանոցային ծառայությունների կայուն որակի ապահովում, սպառողի՝ հյուրանոցային ծառայությունների ընտրությանն աջակցում, հյուրանոցային տնտեսության օբյեկտների մրցունակության բարձրացում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջության զարգացում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 38 | «Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ավտոմոբիլային տրանսպորտով տարբեր տեսակի բեռների փոխադրումների կազմակերպմանը ներկայացվող պայմանների սահմանում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 39 | «Շահումյանի շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Շահումյանի շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ընդգրկում հուշարձանների պետական ցուցակի մեջ | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 40 | «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2018 թվականի ծրագրին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջի ապահովում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 41 | «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | ԼՂՀ կապի և հեռահաղորդակցության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | | | | |
| 42 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության 2017 թվականի կենտրոնացված միջոցառումների աշխատանքների իրականացման ծրագրի հաստատման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ | 2017 թվականի կրթության, գիտության և սպորտի ոլորտում միջոցառումների իրականացման ապահովում | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |

| | | | | |
|----|--|---|-----------------|--------------------|
| | կառավարություն ներկայացնելը | | | |
| 43 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ տեղերը և հեռակա ուսուցմամբ վճարովի տեղերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017 թվականի ընդունելության առկա և հեռակա ուսուցմամբ անվճար և վճարովի համակարգերում մրցութային կարգով ընդունելության կազմակերպում՝ միասնական և բուհի ընդունելության քննությունների արդյունքներով | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 44 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2017-2018 ուստարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցմամբ տեղերը և հեռակա ուսուցմամբ վճարովի տեղերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2017 թվականի ընդունելության կազմակերպում | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 45 | «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվելիք 2017-2018 ուստարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության և այլ բնագավառների համար որակյալ մասնագետների պատրաստում | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 46 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017-2018 ուստարվա ասպիրանտուրայի մասնագիտությունների ցանկը, անվճար և վճարովի տեղերը և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով տեղերը ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստում և հետբուհական կրթության ապահովում | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |

| | | | | |
|---|--|--|------------------|---------------------------------------|
| 47 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2018 թվականի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սպորտի զարգացում և բարձրակարգ մարզիկների պատրաստում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 48 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցմամբ 2018-2019 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերում բարձրագույն կրթության իրականացման նպատակով մասնագիտությունների և ընդունելության քննությունների սահմանում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 49 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցմամբ 2018-2019 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության իրականացման նպատակով մասնագիտությունների սահմանում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 50 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2018 թվականի գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի մասին» ԼՂՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Տնտեսության տարբեր ոլորտներում գիտահետազոտական աշխատանքների կատարում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | | | | |
| 51 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 30-ի N 572 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Վերակազմակերպված մշակույթային պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկի ճշգրտում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 52 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 18-ի N 82-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Մշտապես կազմակերպվող երիտասարդական և մշակույթային միջոցառումների մասնակիցների սննդի և զիջերավարձի օրական վճարման չափերի կարգավորում | Երկրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 53 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման, պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը երիտասարդության արդյունավետ ներգրավման, երիտասարդների քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորման, երիտասարդական մասնակցության խթանում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն | | | | |
| 54 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների պետական պատվերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |

| ԼՂ ֆինանսների նախարարություն | | | | |
|-------------------------------------|--|--|--------------------------------------|---------------------------------------|
| 55 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Որոշման դրույթների համապատասխանեցում «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 56 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 538-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Որոշման դրույթների համապատասխանեցում «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 57 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին» ԼՂ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 58 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման մասին» ԼՂ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 59 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի կատարման մասին» ԼՂ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 60 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 61 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂ օրենքի նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 62 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի 9 ամսվա պետական բյուջեի կատարման մասին» ԼՂ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂ կառավարության աշխատակազմ | | | | |
| 63 | «Պետական և համայնքային գույքի մասնավորեցման և օտարման մասին» ԼՂ կառավարության որոշումների նախագծերը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Պետական և համայնքային գույքի մասնավորեցման և օտարման գործընթացի ապահովում | Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|----|--|---|------------------|---------------------------------------|
| 64 | ԼՂ նախարարների և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների հաշվետվությունները ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և նրան ենթակա այլ գործադիր մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ԼՂ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի ՆՀ-40 հրամանագրի 130-րդ կետի պահանջով ԼՂ նախարարների և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների հաշվետվությունների ընդունում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 65 | 2016 թվականի գործունեության և շրջանների ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին ԼՂ շրջանների վարչակազմերի կողմից ներկայացված հաշվետվությունները ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում պետական կառավարման մասին» ԼՂ Նախագահի 1998 թվականի հուլիսի 27-ի ՆՀ-42 հրամանագրի 5-րդ կետի «գ» ենթակետի պահանջով 2016 թվականի գործունեության և շրջանների ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունների ընդունում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 66 | 2016 թվականին կատարած աշխատանքների մասին ԼՂ համայնքների ղեկավարների հաշվետվությունները բնակչությանը ներկայացնելը | «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջի կատարում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 67 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված «Գեոդեզիայի, քարտեզագրման, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ծառայությունների գնման գծով պետական պատվերի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի զարգացման ծրագրերի հաստատում | Առաջին եռամսյակ | ԼՂ պետական բյուջե |
| 68 | «Պետական գույքի մասնավորեցման 2010-2012 թվականների ծրագրի կատարման 2016 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ԼՂ օրենքի նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների կատարում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 69 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» ԼՂ կառավարության որոշման նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Գործող օրենսդրությանը համապատասխանեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 70 | «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂ օրենքի նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Օրենքի որոշ դրույթների հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 71 | «Պետական գույքի կառավարման մասին» ԼՂ օրենքի նախագիծը ԼՂ կառավարություն ներկայացնելը | Պետական գույքի նպատակային և ծրագրային տնօրինման, տիրապետման և օգտագործման, այդ թվում՝ հաշվառման, գնահատման, գրանցման, կառավարման նկատմամբ վերահսկողության ապահովում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|---|---|--|------------------|---------------------------------------|
| 72 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 172 որոշման պահանջների կատարման ապահովում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 73 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Օրենսգրքի որոշ դրույթների հստակեցում և կարգավորում | Չորրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| Ստեփանակերտի քաղաքապետարան | | | | |
| 74 | «Տեղական տուրքերի և վճարների մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Համայնքների սեփական եկամուտների համալրման նոր աղբյուրների ներմուծում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 75 | «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունների կարգավորում, ինչպես նաև այդ գործընթացի կազմակերպման սկզբունքների պարզեցում և հստակեցում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 76 | «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր նորմերի սահմանում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 77 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 26-ի N 219 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Համայնքային բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործում | Առաջին եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ կառավարության առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն | | | | |
| 78 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի N 713 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ծառայության կողմից շահագործվող որոշ ավտոմեքենաների անվադողերի նորմաների և հատուկ, ինչպես նաև մարտական նշանակության ավտոմեքենաների անվադողերի ու կուտակչային մարտկոցների աշխատատևողության նորմաների սահմանում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 79 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 27-ի N 471-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Փրկարարական ծառայողների համազգեստի կրման նոր նորմաների և ծառայության ստորաբաժանումներում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց համազգեստի տրամադրման նորմաների սահմանում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|---|--|---|------------------|---------------------------------------|
| 80 | «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Փրկարարական ծառայության կազմակերպման և անցկացման, փրկարարական աշխատանքների դեկավարման ու իրականացման, տեղեկատվության հաղորդման կարգի հստակեցում, փրկարարական ծառայողների իրավունքների և պարտականությունների, խրախուսանքների, կարգապահական և նյութական պատասխանատվության ու դրանց կիրառման, ինչպես նաև ծառայության անցման հետ կապված այլ հարցերի կարգավորում | Երրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն | | | | |
| 81 | «Կենդանական աշխարհի վերարտադրության 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | 2017 թվականի ձկան պաշարները պահպանելու նպատակով ջրամբարներում մանրաձկան բացթողում | Առաջին եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
| 82 | «Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Թափոնների մասին» ԼՂՀ օրենքների նախագծերը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Ընդերքօգտագործման թափոնների կառավարում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 83 | «Մետաղական օգտակար հանածոների փորձանմուշները (որակական և քանակական տվյալները) հսկողական անալիզի ենթարկելու կարգը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Մետաղական օգտակար հանածոների փորձանմուշների հսկողական անալիզի իրականացման հարաբերությունների կարգավորում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 84 | «Օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման հետ կապված հարաբերությունների հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 85 | «Բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Բուսական աշխարհի կադաստրից տեղեկությունների տրամադրման հետ կապված հարաբերությունների հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն | | | | |
| 86 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի N 153-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Հետախուզվող տրանսպորտային միջոցների հաշվառման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի հաշվառումներից օգտվելու կարգի հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 87 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի N 154-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Հափշտակված հնաճ առարկաների և մշակութային արժեքների հաշվառման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի հաշվառումներից օգտվելու կարգի հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 88 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի N 156-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Հափշտակված, կորած և հայտնաբերված գեների ու ռազմամթերքի հաշվառման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի հաշվառումներից օգտվելու կարգի հստակեցում | Երկրորդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | |
|----|---|---|------------------|--------------------|
| 89 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2018 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԼՂՀ կառավարություն ներկայացնելը | Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում և այդ նպատակով պետական մարմինների համակարգված գործունեության ապահովում | Չորրորդ եռամսյակ | ԼՂՀ պետական բյուջե |
|----|---|---|------------------|--------------------|

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի հունվարի 17-ի N 1-Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

| Պատասխանատու մարմինը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը |
|------------------------------------|---|---|
| ԼՂՀ առողջապահության նախարարություն | 1. Կառուցման փուլում գտնվող նոր սարքավորումներով հագեցված ժամանակակից ուռուցքաբանական դիսպանսերի շահագործում | - ծրագրի իրականացում փուլային եղանակով |
| | 2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անցիոգրաֆիայի կենտրոնում իրականացվող | - բժշկական կադրերի շարունակական կատարելագործում |

| | | |
|------------------------------------|---|--|
| | աշխատանքների որակի բարձրացում | |
| | 3. Շրջանային առողջապահական համակարգերի արդիականացման շարունակականություն | - շրջանային բուժօգնության կենտրոնների շենքային պայմանների բարելավում, բժշկական կադրերով և սարքավորումներով համալրում |
| | 4. 2016-2020 թվականների ինունականխարգելման պետական ծրագրի շարունակականություն | - կառավարելի վարակներից խուսափում |
| | 5. ՁԻԱՀ-ի հակազդման միջոցառումների շարունակական իրականացում | - բնակչության շրջանում սկրինինգային ծրագրերի և քարոզչական աշխատանքների իրականացում |
| | 6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ-ում ՊՇՌ լաբորատորիայի ներդրում | - վարակիչ հիվանդությունների հայտնաբերում ՊՇՌ մեթոդով |
| ԼՂՀ արդարադատության նախարարություն | 7. Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության և իրականացման նպատակով՝ 1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական և դատական համակարգի գործունեության կատարելագործում (շարունակելի) | - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2013-2017 թվականների ռազմավարական ծրագրի շարունակական իրականացում |
| | 2) դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետության բարձրացում (շարունակելի) | - դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետության բարձրացում ա) Էլեկտրոնային եղանակով հարցումների կատարման համակարգերի ներդրում բ) դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետի կրճատում |
| | 3) անվճար իրավաբանական օգնության տրամադրման ապահովում և դրա որակի բարելավում | - անվճար իրավաբանական օգնության ծավալները պարզելու նպատակով՝ կարիքների գնահատում - անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային մեխանիզմների ուսումնասիրություն |
| | 4) հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացում | - հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացում ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական տեղեկատվական անվճար համակարգի էլեկտրոնային բազայի համալրում բ) քաղաքացիական հասարակության կայացման, քաղաքացիների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների կազմակերպում և իրականացում |
| | 8. Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում (շարունակելի) | - անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և միջոցառումների իրականացում, որոնք կապահովեն նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետության բարձրացմանը, ժամկետների կրճատմանը և քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը: Բյուրոկրատական քաշքշուկ և քաղաքացիների համար առավել անհարմարություն ստեղծող գործառնությունների վերացում |
| ԼՂՀ աշխատանքի և | 9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընտանիքների կարիքավորության գնահատման | - Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընտանիքների կարիքավորության գնահատում |

| | | |
|--------------------------------------|---|--|
| սոցիալական հարցերի նախարարություն | համակարգի ներդրման աշխատանքների իրականացում | |
| | 10. Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում | - աշխատուժի առաջարկի և պահանջարկի գնահատում, գործատուների մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի՝ ըստ տնտեսության ճյուղերի և մասնագիտությունների բացահայտում |
| | 11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնային տնտեսությունների հարցումների իրականացում | - ժողովրդագրական հիմնախնդիրների ուսումնասիրություն |
| | 12. Սոցիալական պաշտպանության ոլորտի հինգ ծրագրերի մոնիթորինգի իրականացում | - սոցիալական ոլորտի պետական ծրագրերի արդյունավետության գնահատում |
| ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | 13. Սննդամթերքի անվտանգության միասնական համակարգի կատարելագործում | - սննդամթերքի անվտանգության համակարգի օրենսդրական դաշտի բարելավում - անվտանգ սննդամթերքով ապահովվածության սպառողների ակնկալիքների բավարարում - թույլատրելի սննդային հավելումների անվանացանկի, դրանց օգտագործման ուղղությունների և թույլատրելի սահմանային քանակությունների սահմանման միջոցով սննդային հավելումների ճշգրիտ օգտագործման վերահսկում և արդյունքում սննդամթերքի անվտանգության առավել բարձր մակարդակի ապահովում |
| | 14. Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագրի իրականացում | - Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կաթիլային և անձրևային համակարգի ներդրման խթանում - կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում - ռոտզման համակարգի արդիականացում - խորքային հորերի կառուցում և վերանորոգում |
| | 15. Ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերականգնում և պահպանություն | - «Վարանդա 3» ջրամբարի վերականգնում - ռոտզման ջրանցքների և ջրատարների մաքրում ու վերականգնում |
| | 16. Սակագնային և սուբսիդավորման քաղաքականության մշակում | - ջրային ոլորտի պետական բաժնեմասեր ունեցող փակ բաժնետիրական ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում՝ սուբսիդավորման տեսքով - սակագնային քաղաքականությանն ուղղված սակագների ընթացիկ ծախսաճածկման մակարդակի աստիճանական բարձրացում - մեխանիկական եղանակով մատակարարվող ռոտզման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորում՝ համաձայն հաստատված կարգի |
| | 17. Խմելու ջրի կայուն և հուսալի ջրամատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տնտեսության ավելացում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերում ուսումնասիրությունների իրականացում | - պետական բյուջեի և ջրամատակարար կազմակերպությունների սեփական միջոցների հաշվին աշխատանքների իրականացում |
| | 18. Ջրային համակարգերի միասնական կառավարման հայեցակարգերի և շահագործման կանոնների մշակում | - համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն - ջրային ենթակառուցվածքների կառավարման երկրատեղեկատվական համակարգի ստեղծում - կառավարման հայեցակարգերի մշակում - ջրային համակարգերի շահագործման նորմերի մշակում |
| ԼՂՀ էկոնոմիկայի նախարարություն | 19. Տնտեսական մրցունակության բարձրացման կարողությունների և հնարավորությունների բարձրացում | - տնտեսական զարգացման ծրագրերի իրականացում |

| | | |
|---|--|--|
| <p>րարություն</p> | <p>20. Ջրուսաշրջության ենթակառուցվածքների ձևավորում և զարգացում, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների ստեղծման խթանում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորում</p> | <ul style="list-style-type: none"> - զբոսաշրջության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերահսկողության ուժեղացում - հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցության ավելի լայն ապահովում - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում, էլեկտրոնային, տպագիր գովազդի պատրաստում և տարածում - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարևորագույն զբոսաշրջային գրավչության օբյեկտներում բազմալեզու տեղեկատվական ցուցանակների տեղադրում |
| | <p>21. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գործի կատարելագործում</p> | <ul style="list-style-type: none"> - պատմամշակութային արգելոցների ստեղծում և պահպանում - պատմամշակութային հուշարձանների վերականգնում և կոնսերվացում - պատմամշակութային հուշարձանների տարածքների մաքրում - «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների խախտումների նկատմամբ իրավապահ մարմինների կողմից ներգործության միջոցների իրականացում |
| | <p>22. Պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրություն</p> | <ul style="list-style-type: none"> - հնագիտական պեղումների իրականացում |
| | <p>23. Պատմամշակութային հուշարձանների հանրամատչելիության ապահովում</p> | <ul style="list-style-type: none"> - դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ճանապարհների բարելավում |
| <p>ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն</p> | <p>24. Մասնագետների վերապատրաստում</p> | <ul style="list-style-type: none"> - հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում, ատեստավորում և որակավորման տարակարգի շնորհում - «Շախմատ» առարկայի ուսուցիչների վերապատրաստում - հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների վերապատրաստում և հավաստագրում |
| | <p>25. Նախադպրոցական կրթության ապահովում</p> | <ul style="list-style-type: none"> - նոր մանկապարտեզների բացում - դպրոցներին կից նախադպրոցական խմբերի ավելացում |
| | <p>26. Ներառական կրթության ապահովում</p> | <ul style="list-style-type: none"> - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական գնահատում և ըստ կարիքի ներառական կամ տնային ուսուցմամբ ընդգրկում - հեռավար ուսուցման կազմակերպում թույլ լսող երեխաների համար |
| | <p>27. Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներառում ուսուցման գործընթացում</p> | <ul style="list-style-type: none"> - ուսումնական հաստատությունների՝ համակարգչային և այլ տեխնիկայով համալրում - ուսումնական հաստատությունների համացանցային հասանելիության ներքին ցանցի ընդլայնում - մոդելավորման և ռոբոտաշինության ներդրման պայմանների ստեղծում և ընդլայնում - «Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագրի իրականացում և ընդլայնում - «dasar.am» ծրագրի հետևողական իրականացում և ընդլայնում |

| | | |
|--|--|--|
| | <p>28. Կրթության ոլորտում բարեփոխումների շարունակական իրականացում</p> | <ul style="list-style-type: none"> - ուսումնական հաստատությունների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության ցուցաբերում - արտաքին ընթացիկ ստուգումների իրականացում - առարկայական օլիմպիադաների և մրցույթների կազմակերպում - կրթական նոր չափորոշիչների ներդրում, սովորողների ծանրաբեռնվածության հստակեցում, այդ թվում՝ բնագիտական առարկաների և օտար լեզուների ուսումնասիրման արդյունավետության ապահովում - ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունների ու ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպում - խորհրդատվությունների, խորհրդակցությունների, լուսմների և գիտաժողովների կազմակերպում - ավագ դպրոցների արդյունավետ գործունեության ապահովում - կրթության ոլորտի օրենսդրության համապատասխանեցում կրթության որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված խնդիրների իրականացմանը |
| | <p>29. Մասնագիտական կրթության հիմնախնդիրների իրականացում</p> | <ul style="list-style-type: none"> - ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրման կարգերի հստակեցում - միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտությունների համապատասխանեցում շուկայական պահանջներին և այդ հաստատությունների հնարավորություններին - «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր օրենքի նախագծի մշակում - սովորողների ուսման որակի բարձրացման և գիտելիքների գնահատման արդյունավետ համակարգի ներդրում |
| | <p>30. Արտադպրոցական դաստիարակության արդյունավետության բարձրացում</p> | <ul style="list-style-type: none"> - արտադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածության ընդլայնում, խմբակների գործունեության արդյունավետության բարելավում - դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում - մարզական, ռազմամարզական և ինտելեկտուալ միջոցառումների նպատակաուղղվածության ապահովում |
| | <p>31. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում բարեփոխումների շարունակական իրականացում</p> | <ul style="list-style-type: none"> - մարզական դպրոցների և սպորտային այլ կառույցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության ցուցաբերում - արտաքին ընթացիկ ստուգումների իրականացում - տարբեր մարզաձևերից մրցույթների, սպորտային միջոցառումների կազմակերպում - խորհրդատվությունների, խորհրդակցությունների, լուսմների կազմակերպում - մարզիչների որակավորման դասընթացների կազմակերպում - մարզական նոր կառույցների համալրում |

| | | |
|--|--|---|
| ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 32. Մշակութային ժառանգության ուսումնասիրություն, պահպանում և հանրահռչակում | <ul style="list-style-type: none"> - մշակութային ժառանգության միավորների վիճակի ուսումնասիրություն և պահպանություն - Արցախի պատմաերկրագիտական թանգարանի ֆոնդի տեղափոխում նոր շենք, ցուցադրության և պահպանման պայմանների ստեղծում - թանգարանային ֆոնդերի համալրում, պահպանություն ու հանրահռչակում - Շուշիի թանգարանի նոր ցուցասրահի բացում - թանգարաններում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աշխատանքների իրականացում - շրջիկ ցուցահանդեսների կազմակերպում, թանգարանային փոխանակումներ - ոլորտի կադրերի վերապատրաստման նոր միջոցառումների իրականացում - գրադարաններում կրթական, հասարակական, մշակութային, ժամանցային ծրագրերի իրականացում - Հովի. Թումանյանի անվան մանկական հանրապետական գրադարանի պայմանների արդիականացում և ֆոնդի համալրում |
| | 33. Մշակութային ինքնության վերարտադրություն | <ul style="list-style-type: none"> - Ստեփանակերտում և Շուշիում «Հին ու նոր քաղաք» փառատոնի անցկացում - ազգային ավանդույթների վերականգնում - ավանդական արհեստագործության զարգացում - արհեստավորների խրախուսում - ստեղծագործական արտադրանքի իրացման հնարավորությունների ստեղծում - «Մշակութային խաչմերուկ» փառատոնի անցկացում - Արցախի ազգային նվագարանների նվագախմբի գործունեության խթանում |
| | 34. Ժամանակակից արվեստի զարգացում | <ul style="list-style-type: none"> - արվեստների բազմազանության խթանում - ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում - երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտում և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծում - կատարողական արվեստի զարգացման խթանման նոր ծրագրերի իրականացում - աջակցություն նորարարական մտահղացումների իրականացմանը - երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրմանն աջակցում - թատերարվեստի նոր ուղղությունների զարգացման միջոցառումների իրականացում - կինոարվեստի և անիմացիայի ուսուցողական դասընթացների կազմակերպում - մշակութային մրցունակ մեդիա և քարոզչական նյութերի պատրաստում |
| | 35. Մշակութային երկխոսության և համագործակցության խորացում | <ul style="list-style-type: none"> - մշակութային համագործակցության շրջանակների զարգացում և ընդլայնում - արտերկրում մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործում - միջազգային ծրագրերին արցախյան մշակութային կազմակերպությունների և անհատ կատարողների ներգրավվածության ապահովում - Սփյուռքի մշակութային կազմակերպությունների, ստեղծագործական կոլեկտիվների, ազգային կառույցների հետ համագործակցության ընդլայնում - Արցախում համահայկական և միջազգային մշակութային նախագծերի իրականացում - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության հետ համատեղ |

| | | |
|--|--|--|
| | | <p>և համաֆինանսավորվող նոր ծրագրերի իրականացում</p> <ul style="list-style-type: none"> - Արցախում մշակույթի ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներում Հայաստանի Հանրապետության և արտերկրի կազմակերպությունների և անհատների ներգրավում |
| | 36. Մշակութային կրթության համակարգի կատարելագործում | <ul style="list-style-type: none"> - մշակութային կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում - մշակութային կրթության միասնական չափորոշիչների սահմանում և կիրառում - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության վերահսկողական գործառնությունի ակտիվացում - համայնքներում գեղարվեստական կրթության հնարավորությունների ստեղծման և ընդլայնման աշխատանքների շարունակականության ապահովում - երեխաների գեղագիտական դաստիարակության հնարավորությունների ընդլայնում |
| | 37. Ստեղծագործական ներուժի բացահայտման և զարգացման պայմանների ապահովում | <ul style="list-style-type: none"> - վարպետության դասերի, լրացուցիչ պարապմունքների կազմակերպում - մենահամերգների, անհատական ցուցահանդեսների և այլ դեբյուտային միջոցառումների կազմակերպմանն աջակցություն - սահմանափակ ֆիզիկական կարողություններով անձանց համար արվեստների ուսուցման դասընթացների կազմակերպում |
| | 38. Ոլորտի ենթակառուցների զարգացում | <ul style="list-style-type: none"> - ռեսուրսների կիրառման արդյունավետության բարձրացում - նյութատեխնիկական բազայի արդիականացում - մատուցվող մշակութային ծառայությունների որակի բարձրացում - ՊՈԱԿ-ների գործունեության օպտիմալացման աշխատանքների իրականացում |
| | 39. Մշակութային ծառայությունների ապակենտրոնացում և համաչափության ապահովում | <ul style="list-style-type: none"> - շրջկենտրոններում և համայնքներում մշակութային կյանքի աշխուժացում, միջմշակութային կապերի ակտիվացում - շրջանային համույթների միջև մրցույթի կազմակերպում - համայնքների մշակութային զարգացման նոր ծրագրերի մշակում |
| | 40. Ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացում | <ul style="list-style-type: none"> - Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթի ներկայացման միջոցառումների կազմակերպում |
| | 41. Հոգևոր զարգացում | <ul style="list-style-type: none"> - հոգևոր անվտանգության ապահովման միջոցառումների իրականացում, հոգևոր գրույցների կազմակերպում - Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տաղավար տոների խորհուրդների պարզաբանման և տոնական միջոցառումների կազմակերպման աշխատանքների իրականացում |
| | 42. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պետական երիտասարդական քաղաքականության համակողմանի և համակարգված մշակում ու իրագործում | <ul style="list-style-type: none"> - երիտասարդական դաշտի ուսումնասիրության, առկա հիմնախնդիրների վերհանման, վերջիններիս լուծմանն ուղղված նոր ծրագրերի մշակման աշխատանքների շարունակականության ապահովում - երիտասարդության ոլորտում միջգերատեսչական համագործակցության ակտիվացում |
| | 43. Երիտասարդության ինքնիրացման պայմանների ու երաշխիքների ապահովում, զբաղվածության հիմնախնդրի կարգավորում | <ul style="list-style-type: none"> - ոչ ֆորմալ կրթության ծրագրի իրականացում(սեմինարների, քննարկումների և գործնական աշխատանքների ձևաչափով) - երիտասարդության խոցելի խմբերին հասարակությանն ինտեգրում - «Երիտասարդ Արցախ» կայքի գործարկում |
| | 44. Երիտասարդության արժեքային կողմնորոշման | <ul style="list-style-type: none"> - «Առողջ ապրելակերպ» ծրագրի իրականացում |

| | | |
|---|--|---|
| | <p>դրական դաշտի ձևավորում</p> | <ul style="list-style-type: none"> - «Ճանաչենք մեր երկիրը» երիտասարդական արշավի կազմակերպում - բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների իրականացում - տոն և հիշատակ օրերի նշանավորում - հոգևոր անվտանգության միջոցառումների իրականացում - երիտասարդության ազատ ժամանցի միջոցառումների՝ ընտանիքի միջազգային օրվա առթիվ միջոցառումների և «Ընտանեկան ճամբար-2017» ծրագրի իրականացում |
| | <p>45. Երիտասարդների հասարակական ակտիվության խթանում</p> | <ul style="list-style-type: none"> - ֆինանսական աջակցության ցուցաբերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող հասարակական կառույցների և նախաձեռնող խմբերի կողմից իրականացվող նպատակային երիտասարդական ծրագրերի իրականացմանը - պետական երիտասարդական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին երիտասարդների ներգրավում - կամավորական շարժման խթանման միջոցառումների իրականացում |
| | <p>46. Համահայկական և միջազգային երիտասարդական համագործակցության զարգացում</p> | <ul style="list-style-type: none"> - Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և արտերկրի հետ համագործակցության, համատեղ միջոցառումների իրականացում - Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպվող երիտասարդական միջոցառումներին Արցախի երիտասարդության մասնակցության ապահովում - Արցախում համահայկական և միջազգային երիտասարդական նախագծերի մշակում ու իրականացում |
| <p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p> | <p>47. Բնակարանաշինություն, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ծնելիության և բազմազավակության խթանման, ինչպես նաև այլ սոցիալապես խոցելի խմբերին պատկանող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ծրագրերի շրջանակներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերի ջրամատակարարման ապահովման և ոռոգման համակարգերի վերանորոգում և կառուցում, դպրոցաշինություն, ավտոճանապարհների կառուցում, վերանորոգում, պահպանում, մշակութային, առողջապահության, հասարակական և վարչական նշանակության օբյեկտների կառուցապատման կանոնակարգման նոր մոտեցումների ձևավորում, նորմատիվ-իրավական բազայի կատարելագործում և արդիականացում</p> | <ul style="list-style-type: none"> - գյուղերի հեռանկարային զարգացումը խթանելու և բնակչության արտահոսքը կանխելու նպատակով բնակարանաշինության ոլորտում գյուղական բնակավայրերում նոր բնակելի տների շինարարության իրականացում - գոյություն ունեցող բնակարանային ֆոնդի պահպանման, սպասարկման և շահագործման խնդիրների ապակենտրոնացում - պատերազմական գործողություններից տուժած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացում - 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից տուժած բնակավայրերի վերանորոգման աշխատանքների իրականացում - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի առաջին գծում ինժեներական կառույցների իրականացում - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական, մարզամշակութային և առողջապահական օբյեկտների կառուցման և հիմնանորոգման, բնակավայրերի ջրամատակարարման, ապահովման և ոռոգման համակարգերի վերականգնման և արդիականացման ծրագրերի իրականացում - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների պահպանման, սպասարկման, կառուցման և վերանորոգման ուղղությամբ աշխատանքների իրականացում - նախագծահետազոտական աշխատանքների իրականացում - նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման որակի բարձրացում և կատարելագործում՝ այն համապատասխանեցնելով նախագծման ժամանակակից պահանջներին |

| | | |
|---|--|--|
| ԼՂՀ ֆինանսների նախարարություն | 48. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի զարգացում | <ul style="list-style-type: none"> - Էլեկտրոնային հաշվետվության համակարգի համատարած կիրառման համար պայմանների ապահովում, հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսակների և ծավալների ավելացում - անձնական հաշվի քարտերի վարման համակարգի ավտոմատացում - Էլեկտրոնային համակարգի համայրում նոր ենթաբաժիններով |
| | 49. Հարկ վճարողներին մատուցվող ծառայություններ | <ul style="list-style-type: none"> - հարկ վճարողներին ժամանակին իրազեկման ապահովում՝ պարբերաբար ուսուցումների, թեժ գծի, «Սկայպ» հեռաձայնային ծառայության, հարկային մարմնի պաշտոնական կայքէջի, հրապարակումների և իրազեկման այլ աղբյուրների միջոցով, այդ թվում՝ նոր ստեղծված հարկ վճարողների մոտ վերջիններիս ցանկությամբ առաջին մեկ տարվա ընթացքում պարբերաբար այցելությունների կազմակերպում և հարկման համապատասխան ռեժիմներին վերաբերող գրքույկների ու այլ իրազեկման նյութերի տրամադրում |
| | 50. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործում | <ul style="list-style-type: none"> - հարկային ծառայողների ատեստավորման, ուսուցման և վերապատրաստման ծրագրերի իրագործում |
| | 51. Հարկ վճարողների նկատմամբ իրականացվող հսկողություն | <ul style="list-style-type: none"> - հարկային հսկողության արդյունավետության բարձրացում՝ ռիսկային տնտեսավարող սուբյեկտների և ոլորտների նկատմամբ տարբերակված մոտեցումների կիրառմամբ - սովերի դեմ պայքարի հայեցակարգի շրջանակում համապատասխան միջոցառումների իրականացում - կամերալ ուսումնասիրությունների համակարգի կատարելագործում, այդ թվում՝ երրորդ անձից ստացվող տեղեկությունների հիման վրա |
| ԼՂՀ կառավարությանն առնթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն | 52. Բնակչության ազդարարման համակարգի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում | <ul style="list-style-type: none"> - բնակչության ազդարարման նոր համակարգի ներդրման գործընթացի և այդ ոլորտում հայաստանյան, ինչպես նաև արտասահմանյան փորձի ուսումնասիրում - բնակչության ազդարարման համակարգի կատարելագործմանն ու արդիականացման ծրագրի մշակում և ներդրման գործընթացի մեկնարկ |
| | 53. Ծառայության կադրային քաղաքականության և կադրային ապահովման գործընթացների կազմակերպման արդյունավետության բարձրացում | <ul style="list-style-type: none"> - ծառայությունը բանիմաց կադրերով համալրելու գործընթացի շարունակական իրականացում - փրկարարական, հրշեջ-փրկարարական ծառայության կազմակերպման ու իրականացման, ինչպես նաև ծառայության կանոնադրական խնդիրներին համահունչ կադրերի ընտրություն և տեղաբաշխում |
| ԼՂՀ կառավարությանն առնթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն | 54. Բնապահպանական և բնական ռեսուրսների կառավարման, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության արդյունավետության բարձրացում | <ul style="list-style-type: none"> - օրենսդրական դաշտի կարգավորում և միջոցառումների իրականացում |

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունվարի 2017թ.

N 3-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***:

1. Հաստատել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2017-2019 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2017-2019 թվականների միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշման N 2 հավելվածով պատասխանատու կատարողներին՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվա մարտի 1-ը, մոնիթորինգի իրականացման նպատակով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, պետական ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրագործման մշտապես գործող բարձրագույն խորհրդին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2017-2019 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) բխում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշման պահանջներից:

2. Ծրագրի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2017-2019 թվականների իրականացվող միջոցառումների շնորհիվ ժողովրդագրական բացասական միտումների կանխումն ու իրավիճակի կայունացումը:

**II. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 148 075 մարդ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը 2015 թվականի հունվարի 1-ի նկատմամբ նվազել է 842 մարդով կամ շուրջ 0,5 տոկոսով (տես աղյուսակ 1):


**Աղյուսակ 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական բնակչության
 թվաքանակը 2011-2016 թվականների հունվարի 1-ի դրությամբ**

| Ժամանակահատվածը | Բնակչության թվաքանակը (հազար մարդ) |
|-------------------------------------|---------------------------------------|
| 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ | 148,1 |
| 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ | 148,9 |
| 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ | 148,1 |
| 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ | 146,6 |
| 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ | 144,7 |
| 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ | 143,6 |

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակի փոփոխությունները պայմանավորված են բնակչության աճի բաղադրիչների՝ ծնելիության, մահացության, ամուսնության ու ամուսնալուծության և միգրացիայի ցուցանիշների փոփոխություններով:


5. Գծապատկեր 1-ում պատկերված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005-2015 թվականներին գրանցված ծնունդների թիվը: 2015 թվականին գրանցվել է 2582 կենդանի ծնված՝ 154-ով ավել, քան 2014 թվականին (2 428):

Գծապատկեր 1. Ծնունդների բաշխումը 2005-2015 թվականներին




6. Ծնելիության ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից մեկն ամուսնությունների առկա մակարդակն է: Գծապատկեր 2-ում պատկերված է հանրապետությունում 2005-2015 թվականներին գրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների թիվը: Այդ ժամանակահատվածում ամուսնությունների միջին ցուցանիշը կազմել է 1 152: 2015 թվականին գրանցված ամուսնությունները 2014 թվականի համեմատ (1 412) նվազել են 226-ով և կազմել՝ 1 186: Ամուսնալուծությունների դեպքերը 2015 թվականին նվազել են 15,09 տոկոսով կամ 32-ով և կազմել՝ 180:

Գծապատկեր 2. Ամուսնությունները և ամուսնալուծությունները 2005-2015 թվականներին



7. Գծապատկեր 3-ում պատկերված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005-2015 թվականներին գրանցված մահացածների թիվը: 2015 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցվել է մահվան 1 290 դեպք՝ 2014 թվականի (1 309) համեմատ նվազելով 19 դեպքով: Մահացության պատճառական կառուցվածքում մահացության հիմնական պատճառներն են՝ 2015 թվականին արյան շրջանառության համակարգի հիվանդությունները՝ 871 դեպք (67,5 տոկոս), վնասվածքները, թունավորումները և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքները՝ 55 դեպք (4,2 տոկոս), նորագոյացությունները՝ 184 դեպք (14,3 տոկոս), մարտոդական օրգանների հիվանդությունները՝ 46 դեպք (3,6 տոկոս), վարակիչ և մակարուծական հիվանդությունները՝ 1 դեպք (0,08 տոկոս): 2015 թվականին՝ 2014 թվականի համեմատ, նշված պատճառներից մահացությունների աճ է գրանցվել արյան շրջանառության համակարգի հիվանդություններից 18-ով (2,1 տոկոսով) և մարտոդական օրգանների հիվանդություններից՝ 33-ով (2,5 անգամ): Դեպքերի նվազում են գրանցվել նորագոյացություններից 57-ով (23,6 տոկոսով), վարակիչ և մակարուծական հիվանդություններից 5-ով (83,3 տոկոսով):

Գծապատկեր 3. Մահացածները 2005-2015 թվականներին



8. 2015 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արձանագրվել է մինչև մեկ տարեկան երեխաների մահացության 28 դեպք (1 000 կենդանածնի հաշվով 10,8 երեխա՝ նախորդ տարվա 21 դեպքի և 8,6 երեխայի համեմատ):


Ընդ որում, գրանցվել է մեկից մինչև չորս տարեկան երեխաների մահացության ինը դեպք:

9. Հղիության հետ կապված բարդություններից ծննդյան և հետծննդյան ժամանակահատվածում 2014, 2015 թվականներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մայրամահացության դեպք չի գրանցվել:

10. 2015 թվականին ծնվածների թիվը կազմել է 2 582 մարդ, մահացածներինը՝ 1 290, իսկ 2014 թվականին՝ համապատասխանաբար 2 428 և 1 309 մարդ: Արդյունքում բնական հավելաճը 2015 թվականին կազմել է 1 292 մարդ, իսկ 2014 թվականին՝ 1 119 մարդ:


11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա իր ազդեցությունն ունի նաև գործազրկության մակարդակը: Գծապատկեր 4-ում պատկերված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005-2015 թվականներին պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը: Դիտարկելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ու կառուցվածքը հարկ է փաստել, որ 2015 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է 1 259, իսկ գործազուրկների թիվը՝ 1 232: Նախորդ տարվա նկատմամբ աշխատանք փնտրող անձանց թվաքանակը նվազել է 25 տոկոսով, գործազուրկների թիվը՝ 19,7 տոկոսով: Գործազրկության մակարդակը 2015 թվականին կազմել է 1,9 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 0,6-ով: 2015 թվականի գործազրկության մակարդակի նվազումը 2014 թվականի համեմատ, հիմնականում, պայմանավորված է գործազրկության նպաստի վճարման ծրագրի դադարեցման հետ: Անհրաժեշտ է նշել նաև, որ սույն կետում բերված գործազրկության պաշտոնական ցուցանիշները տարբերվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առկա թաքնված գործազրկության տվյալներից:

Գծապատկեր 4. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը (մարդ) 2005-2015 թվականներին



12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ժողովրդագրական մարտահրավերներից մեկը մնում է միջպետական միգրացիան: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ի թիվս այլ պատճառների, միգրացիայի դրդապատճառներ են շարունակում հանդիսանալ աշխատանք փնտրողների մասնագիտական կարողություններին համապատասխան աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը: Ճիշտ է, վերջին մի քանի տարիներին մեխանիկական հավելվածը չնայած ունի դրական մնացորդ (վերաբնակեցման ծրագրերի իրականացման շնորհիվ), այնուհանդերձ, վիճակը հեռու է բավարար լինելուց, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների բաժնի կողմից բնակչության հաշվառման և դուրս գրման տվյալներն ամբողջապես չեն արտացոլում միգրացիայի իրական ծավալները: Անհրաժեշտ է նշել, որ միգրացիայի դրդապատճառ է հանդիսանում նաև տարածաշրջանում տիրող անկայուն քաղաքական իրավիճակը:

Գծապատկեր 5. Եկողները, մեկնողները 2005-2015 թվականներին



Գծապատկեր 5-ում պատկերված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005-2015 թվականներին գրանցված եկողների և մեկնողների թիվը: 2015 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պաշտոնապես հաշվառված եկողների թվաքանակը կազմել է 880 մարդ (2014 թվականին՝ 946 մարդ), իսկ մեկնողների թվաքանակը նույն ժամանակահատվածում՝ 589 մարդ (2014 թվականին՝ 578 մարդ): Մեխանիկական հավելվածը 2015 թվականին կազմել է 291 մարդ (2014 թվականին՝ 368 մարդ):

13. Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը բնակչության կառուցվածքում տարեց և ծեր բնակչության տեսակարար կշռի աճն է, ինչը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցությունում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև մասամբ միգրացիայի հետևանք է: Այդ երևույթը հետխորհրդային առաջին տարիներին զգալիորեն արագացել էր՝ պայմանավորված ծնելիության մակարդակի անկմամբ և վերարտադրողական բարձր պոտենցիալ ունեցող բնակչության էմիգրացիոն ակտիվությամբ:

2008 և 2015 թվականների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության սեռատարիքային (ժողովրդագրական) բուրգերի դիտարկումները ցույց են տալիս, որ ժողովրդագրական գործընթացներում կտրուկ և առարկայական դրական փոփոխություններ տեղի չունենալու պարագայում պետք է սպասել բնակչության ծերացման խորացում, որը պետությանը կպարտադրի տարեցների հիմնահարցերի լուծումների հետ կապված ֆինանսական և մարդկային ռեսուրսների լրացուցիչ խոշոր հատկացումներ: Եթե 2005 թվականի մարդահամարի տվյալներով աշխատունակ տարիքից ցածր տարիք ունեցող բնակչության թվաքանակը կազմում էր ընդհանուր բնակչության թվաքանակի 23,9 տոկոսը, աշխատունակ տարիք ունեցող բնակչության թվաքանակը՝ 61,7 տոկոսը, իսկ աշխատունակ տարիքից բարձր տարիք ունեցող բնակչության թվաքանակը՝ 14,4 տոկոսը, ապա 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 25,9, 60,3, 13,8 տոկոս (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակի կառուցվածքն ըստ հիմնական տարիքային խմբերի

| Տարիքային խումբ | առ 18.10.2005 թվականի | | առ 01.01.2015 թվականի | | առ 01.01.2016 թվականի | |
|----------------------------|-----------------------|--------------|-----------------------|--------------|-----------------------|--------------|
| | հազար մարդ | տոկոսներ | հազար մարդ | տոկոսներ | հազար մարդ | տոկոսներ |
| Աշխատունակ տարիքից ցածր | 33,0 | 23,9 | 37,8 | 25,4 | 38,4 | 25,9 |
| Աշխատունակ տարիք | 84,9 | 61,7 | 89,1 | 59,8 | 89,3 | 60,3 |
| Անաշխատունակ տարիքից բարձր | 19,8 | 14,4 | 22,0 | 14,8 | 20,4 | 13,8 |
| Ընդամենը | 137,7 | 100,0 | 148,9 | 100,0 | 148,1 | 100,0 |

14. Արտաքին միգրացիոն հոսքերում ընդգրկված անձանց մեջ գերակշռում են աշխատանքային միգրանտները: Ինչպես վերջին երկու տասնամյակում, այնպես էլ ներկայումս, միգրացիոն հիմնական ուղղությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից ուղղված է դեպի Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն և այլ երկրներ: Արտաքին միգրացիայի բացասական ազդեցությունը վերարտադրողական տարիքի անձանց՝ մասնավորապես տղամարդկանց, տևական բացակայությունն է ընտանիքներից, ինչն ուղղակիորեն ազդում է հատկապես բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այդ հանգամանքով պայմանավորված՝ անբարենպաստ փոփոխությունների են ենթարկվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության սեռատարիքային համամասնությունները: Ընդ որում, բավարար երաշխիքներ չկան, որ արտերկրում կուտակվող աշխատանքային միգրանտների որոշակի մասն ի վերջո չի մնա մշտական բնակչության և, տանելով ընտանիքը, չի խաթարի արտաքին միգրացիոն գործընթացների հարաբերական կայունությունը:

III. ԾՐԱԳՐԻ ՉԻՄՆԱԿԱՆ ԽՂԻՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՆՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Հաշվի առնելով վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցած ժողովրդագրական զարգացումների միտումները՝ սահմանվել են Ծրագրի հիմնական խնդիրները: Դրանք են՝

1) ծնունդների աճի ապահովումը, երեխայի՝ հատկապես երրորդ և հաջորդ, ծննդյան, նյութական խրախուսումը.

2) մանկամահացության ցուցանիշի բարելավումը՝ մանկամահացության դեպքերի նվազեցման միջոցով.

3) վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցումը.

4) երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության սեռատարիքային կառուցվածքի աստիճանական բարելավումը.

5) ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործումը.

6) բնակչության ծերացման կանխումը.

7) միգրացիոն գործընթացների կարգավորումը և բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմումը.

8) կայուն տնտեսական աճի ապահովում:

16. Ընտանիքի ընդլայնված վերարտադրության ապահովման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների մասին» N 15-Ն որոշման համաձայն՝ 2017-2019 թվականներին առնվազն կշարունակվի երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան նյութական խրախուսման տարբերակված մոտեցումը՝ առաջին երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը պահպանելով 100 000 ՀՀ դրամ, երկրորդ երեխայինը՝ 200 000 ՀՀ դրամ, երրորդ երեխայինը՝ 500 000 ՀՀ դրամ և 500 000 ՀՀ դրամի չափով ավանդի բացում, չորրորդ և հաջորդ երեխաներինը՝ 700 000 ՀՀ դրամ և 700 000 ՀՀ դրամի չափով ավանդի բացում:

17. Բնական հավելաճի ապահովումն անհնար է առանց մանկական մահացության մակարդակի, տղամարդկանց վաղաժամ մահացության և մայրական մահացության դեպքերի նվազեցման, ինչպես նաև կյանքի որակի բարելավման:

18. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտապես բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների, սոցիալ-կենցաղային խնդիրների լուծման անհրաժեշտությունից ելնելով՝ պետության կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 889-Ն որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների զավակներին, փախստականներին և բազմազավակ, միաձնող ընտանիքներին հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ, բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով տրամադրվում է պետական ֆինանսական աջակցություն: Ծրագրի շրջանակներում 2015-2016 թվականներին պետական ֆինանսական աջակցություն է տրամադրվել 68 շահառուի:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի N 353-Ն որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով տրամադրվում է մինչև 3 000 000 ՀՀ դրամի չափով անհատույց պետական ֆինանսական աջակցություն: Ծրագրի շրջանակներում 2015-2016 թվականներին անհատույց պետական ֆինանսական աջակցություն է տրամադրվել 52 շահառուի:

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի N 381-Ն որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում վարձակալական հիմունքներով բնակվող փախստականի հաշվառման վկայական ստացած ընտանիքներին պետական ծրագրի շրջանակներում տրամադրվում է ֆինանսական աջակցություն: Ծրագրի շրջանակներում 2016 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ֆինանսական աջակցություն է տրամադրվել շուրջ 85 շահառուի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ց Ա Ն Կ
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը | Պատասխանատու կատարողը |
|---|---|---------------------|--|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. Ծնելիության խթանում և ընտանիքի պաշտպանություն | | | | |
| 1. | Նորաստեղծ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով ամուսնության նպաստի տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 2. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների ծրագրի շրջանակներում երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրում, ընտանիքում երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում նպատակային ժամկետային ավանդների բացում, վեց և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին բնակելի տների հատկացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 3. | Զբաղվածության ոլորտում ակտիվ ծրագրերի իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 4. | Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով մոնիթորինգի իրականացում և գնահատում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 5. | Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 6. | Չաշխատող անձին մայրության նպաստի տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 7. | Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանցի ընդլայնում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 8. | Դպրոցական հագուստ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարաններ ընդունվողներին | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |

| | | | | |
|--|---|---------------------|---|---|
| | միանվագ դրամական օգնության տրամադրում | | | |
| 9. | «Երիտասարդության շրջանում ընտանեկան արժեքների քարոզչության» և «Ընտանեկան ճամբար-2017, 2018, 2019» միջոցառումների կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 10. | Մասնագիտացված արտահիվանդանոցային և հիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 11. | Վերարտադրողական առողջության աջակցման նպատակով անպտուղ զույգերի մոտ հիվանդությունների վաղ հայտնաբերման և բուժման կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 12. | 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատում և խորհրդատվության տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 2. Մահացության մակարդակի նվազեցում | | | | |
| 13. | Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելմանը և դրանց հետևանքների ծանրության նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն |
| 14. | Բնակչության առողջության առաջնային պահպանման ընդհանուր բնույթի ծրագրեր և հիվանդանոցային ծառայություններ | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 15. | Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով արգանդի պարանոցի քաղցկեղի սկրինինգ՝ օնկոցիտոլոգիական հետազոտությունների կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 16. | Պալարախտային և ուռուցքային փոփոխությունների վաղ հայտնաբերման նպատակով բնակչության մասսայական ֆլյուորոգրաֆիկ հետազոտության կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 17. | Արյան շրջանառության հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով գարկերակային ճնշման սկրինինգի իրականացում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 18. | Շաքարային դիաբետի կանխարգելման, գլյուկոմետրիայի և լիպիդային փոխանակության խանգարման վաղ հայտնաբերման նպատակով խոլեստրիինի մակարդակի որոշման իրականացում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 19. | Ժառանգական անամնեզում գլաուկոմա ունեցող հիվանդներին և գլաուկոմայի վաղ հայտնաբերման նպատակով տեսողության սրության որոշում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 20. | Հեմոդիալիզի իրականացում | 2017-2019 թվականներ | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 3. Բնակչության առողջության պահպանում և առողջ ապրելակերպի վարման պայմանների ստեղծում | | | | |

| | | | | |
|-----|---|---------------------|---|---|
| 21. | Հանրակրթական դպրոցների սովորողների և ուսուցիչների բժշկական զննման իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 22. | «Առողջ ապրելակերպ» քարոզչական ծրագրի և «Առողջ ապրելակերպ» նշանաբանով հանրապետական մարզական փառատոնի իրականացում, հանրակրթական դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 23. | Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 24. | Մանկապատանեկան առողջարարական և ռազմամարզական ճամբարներում դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 25. | Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության, անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 26. | Հանրապետական մարզական զանգվածային միջոցառումների և փառատոնների, մրցույթների, սպարտակիադանների կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն |
| 27. | Ծխախոտամոլության, թմրամոլության, հարբեցողության և ոչ անվտանգ սեռական վարքագծի դեմ ուղղված կանխարգելիչ միջոցառումների իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն |
| 28. | Արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոնների և առաջին օգնության ցուցաբերման թեմաներով բնակչության ուսուցման կազմակերպում (դժբախտ պատահարների վնասվածքների հանկարծահաս հիվանդությունների ժամանակ մարդու կյանքը փրկելու և բարդությունները կանխելու նպատակով ցուցաբերվող պարզագույն, անհապաղ և նպատակահարմար օգնության միջոցառումներ) | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն |
| 29. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման միասնական համակարգի կատարելագործում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն |
| 30. | Շարժական լաբորատորիայի և առաջատար բժիշկ-մասնագետների խորհրդատվությունների միջոցով գյուղական բնակչության մասնագիտացված բուժօգնության կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 31. | Օստեոպորոզի կանխարգելման նպատակով, դենսիտոմետրիայի միջոցով, ոսկրանյութի խտության որոշում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 32. | Համակարգչային տամոգրաֆիա հետազոտության և ախտորոշման միջոցով բազմաթիվ հիվանդությունների վաղ հայտնաբերում և բուժում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |

| | | | | |
|---|---|---------------------|---|---|
| 33. | Բնակչության շրջանում համաճարակաբանության և հիգիենայի ծառայությունների, պատվաստումների իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 34. | Առողջ ապրելակերպի քարոզչության նպատակով շաբաթը մեկ անգամ հեռուստատեսությամբ «Առողջություն» ծրագրի հեռարձակում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հանրային հեռուստատալիոնընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն |
| 35. | Հանրապետական բժշկական կենտրոնում մինչև 24 ժամ պահանջվող բժշկական օգնության կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 36. | Անգիոգրաֆիկ, կորոնարոգրաֆիկ, ստենոպլորման և էնդովասկուլյար միջամտության ծառայությունների իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 37. | Օրթեզավորման, պրոթեզավորման և կորսետավորման ծրագրի իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 38. | Ֆիզիկական ակտիվության բավարար ապահովման նպատակով առողջ ապրելակերպի քարոզչություն | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 39. | Մարզիկների բժշկական հետազոտությունների և հաշմանդամ երեխաների առողջության վերականգնման կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 40. | Որոշ հիվանդություններով տառապող քաղաքացիներին (սրտի վիրահատությունների, չարորակ նորագոյացությունների բուժման նպատակով ձեռք բերված դեղորայքի, բացառիկ դեպքերում նաև մինչև 18 տարեկան հազվադեպ հանդիպող հիվանդություններով տառապող անձանց) դրամական օգնության տրամադրում կամ փոխհատուցում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 41. | Տեսողության խնդիրներ ունեցող երեխաների բժշկական օգնության նպատակով, բազմաֆունկցիոնալ ակնաբուժական կաբինետի միջոցով, պլեոպտիկ բուժման կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 4. Միգրացիոն գործընթացների կարգավորում | | | | |
| 42. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առանձին խմբերի քաղաքացիներին հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ, բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով պետական ֆինանսական աջակցության տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամ |
| 43. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամ |
| 44. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում վարձակալական հիմունքներով բնակվող փախստականի | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ |

| | | | | |
|--|---|---------------------|--|--|
| | հաշվառման վկայական ստացած ընտանիքներին ֆինանսական աջակցության տրամադրում | | պետական բյուջե | |
| 45. | Պետության ժողովրդագրական տեսքի դրական փոփոխության, սոցիալ-տնտեսական կայացման նպատակով հայրենադարձության ծրագրի շարունակական իրականացում՝ հիմք ընդունելով հայրենադարձների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումների տարեկան և շրջանների համաչափ զարգացման ծրագրերը | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ |
| 46. | Հայրենադարձության ծրագրի քարոզչությանը միտված աշխատանքների մշակում և իրագործում՝ ինտերակտիվ կայքէջ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների, արտասահմանում գործող հայկական ընկերությունների հետ համագործակցելու միջոցով | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ |
| 47. | 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց և ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ծրագրի մշակման ուղղությամբ աշխատանքների, մոնիթորինգների կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ |
| 48. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում վերաբնակիչների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումների իրականացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ |
| 49. | Համագործակցություն Լիբանանի Արցախի վերաշինության և վերաբնակեցման հանձնաժողովի «Արցախֆոնդ» հիմնադրամի հետ՝ «Նոր կյանք, նոր հույս» (հայրենադարձության ծրագրի մեջ ընդգրկված բնակավայրերում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխային սահմանված նվիրատվության տրամադրում) ծրագրի շարունակական գործարկման համար հայրենիք վերադարձած հայրենակիցների բնակեցման, ինտեգրման, ծնելիության խթանման նպատակով | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ, «Արցախֆոնդ» հիմնադրամ |
| 5. Տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացում | | | | |
| 50. | Գյուղերի հեռանկարային զարգացումը խթանելու և բնակչության արտահոսքը կանխելու նպատակով գյուղական բնակավայրերում նոր բնակելի տների կառուցում, վերակառուցում, վերանորոգում, փոխհատուցման և շինանյութերի տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն |
| 51. | Մասնագետներով չապահովված գյուղական բնակավայրերի դպրոցներ մանկավարժ և բժիշկ-մասնագետների ուղեգրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն |
| 52. | Հեռուստահաղորդումների հեռարձակման պետական ծրագիր | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն |
| 53. | Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական | 2017-2019 | Լեռնային Ղարաբաղի | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության |

| | աջակցության ծրագրի իրագործում | թվականներ | Հանրապետության պետական բյուջե | Էկոնոմիկայի նախարարություն |
|--|--|---------------------|---|--|
| 54. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ենթաշրջանային ծրագրերի մշակում և իրագործում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն |
| 55. | Համայնքների խոշորացման և միջամայնքային միավորումների ձևավորման մոտեցումների վերաբերյալ ուսումնասիրությունների և վերլուծությունների, ինչպես նաև համայնքների խոշորացման հայեցակարգի մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում | 2017-2019 թվականներ | ֆինանսավորում չի պահանջվում | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր |
| 56. | Հանրապետական նշանակության միջոցառումների (մրցույթներ, փառատոներ, ցուցահանդեսներ) կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 57. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում արվեստի դպրոցների մասնաճյուղերի բացում, առկա արվեստի դպրոցներում ու մասնաճյուղերում նոր բաժինների բացում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 6. Հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանում և պաշտպանություն | | | | |
| 58. | Ոչ նյութական մշակութային ժառանգությանը վերաբերող ուսումնասիրություններ, հրապարակումներ և հանրահռչակման գործառնություններ իրագործող գիտական և մշակութային կազմակերպություններին, արշավախմբերին պետական աջակցության տրամադրում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 59. | Ոչ նյութական մշակութային ժառանգությանը նվիրված միջոցառումների (համերգներ, ծիսակարգեր, ավանդական խաղեր, մրցույթներ և ցուցադրություններ) կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 60. | Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության մասնագետ կադրերի պատրաստում, վերապատրաստում, վերաորակավորում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 61. | Ազգային ավանդական արհեստների, ցուցահանդեսների կազմակերպում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 62. | Ազգագրական, բանահյուսական, բարբառագիտական ժողովածուների կազմում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| 7. Անհրաժեշտ տեղեկատվության ապահովում | | | | |
| 63. | Բնակչության բնական ու մեխանիկական շարժի, ծնունդների ու մահերի, ամուսնությունների ու ամուսնալուծությունների և այլ ժողովրդագրական ցուցանիշների հաշվառում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն |
| 64. | Ժողովրդագրական ցուցանիշների տեղեկատվական համակարգի համապատասխանեցում միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն |

| | | | | |
|-----|---|---------------------|---|---|
| 65. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի և ժողովրդագրության ոլորտում տարվող պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և ծրագրվող միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հանրային հեռուստատաղիտրոնային կայքէջ» փակ բաժնետիրական ընկերություն, «Ազատ Արցախ» հանրապետական թերթ |
| 66. | «Տեղեկատվական ոլորտում երիտասարդության ներգրավում» միջոցառման իրականացում, «artsakhyouth.am» կայքի բնականոն գործունեության ապահովում | 2017-2019 թվականներ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն |

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ա լ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողների և արտակարգ իրավիճակների պետական ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 615-Ն որոշման 1-ին կետի 1.1 ենթակետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (գաղտնի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 փետրվարի 2017թ.

N 51-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է**:

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի եռամսյակային (աճողական) համամասնություններում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամ)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | Համամասնությունների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|-----------|----------|-----|---|--|------------------|------------------|------------------|
| | | | | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
| | | | ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ | - | - | - | - |
| | | | այդ թվում՝ | | | | |
| 01 | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | (70000.0) | (70000.0) | - | - |
| | 7 | | Պետական պարտքի գծով գործառնություններ | (70000.0) | (70000.0) | - | - |
| | | 1 | Պետական պարտքի գծով գործառնություններ | (70000.0) | (70000.0) | - | - |
| | | 01 | Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ) | (70000.0) | (70000.0) | - | - |
| | | | ԼՂՀ ֆինանսների նախարարություն | (70000.0) | (70000.0) | - | - |
| 10 | | | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 70000.0 | 70000.0 | - | - |
| | 2 | | Ծերություն | - | - | (70000.0) | (70000.0) |
| | | 1 | Ծերություն | - | - | (70000.0) | (70000.0) |
| | | 06 | Աշխատանքային կենսաթոշակներ | - | - | (70000.0) | (70000.0) |
| | | | ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | (70000.0) | (70000.0) |
| | 4 | | Ընտանիքի անդամներ և զավակներ | 70000.0 | 70000.0 | 70000.0 | 70000.0 |
| | | 1 | Ընտանիքի անդամներ և զավակներ | 70000.0 | 70000.0 | 70000.0 | 70000.0 |
| | | 07 | ԼՂՀ-ում ծնելիության խթանում | 70000.0 | 70000.0 | 70000.0 | 70000.0 |
| | | | ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 70000.0 | 70000.0 | 70000.0 | 70000.0 |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿՎԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 փետրվարի 2017թ.

N 58-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 137 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղբութի շրջանի Դրախտիկի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,077 հեկտար բազմամյա տնկարկը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Դրախտիկի համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 փետրվարի 2017թ.

N 59-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 372 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Հարավի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,24 հեկտար անտառը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 փետրվարի 2017թ.

N 60-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ա մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 173 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Նորշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 2,7429 հեկտար թփուտը փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 փետրվարի 2017թ.

N 61-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 168 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,7 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 փետրվարի 2017թ.

N 71-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հունվարի 19-ի ՆՀ-7-Ն հրամանագրով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**:

1. 2017 թվականի փետրվարի 20-ի աշխատանքային օրը տեղափոխել 2017 թվականի փետրվարի 25-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Բաղաքացիական գործ ԸԻԴ N 0257/02/16թ.
Բաղաքացիական գործ ԸԻԴ N 0257/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան

Կ.Սաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

12 հունվարի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Աբրահամյանի
դատավորներ՝ Գ.Արզումանյանի
Ա.Հայրապետյանի

դրնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Գրենա Աշոտի Միրզաջանյանի ընդդեմ Ալլա Վլադիմիրի Խաչատրյանի՝ 560.000 /հինգ հարյուր վաթսուհին հազար/ ՀՀ դրամ պարտքի գումարը և հաշվեգրվելիք տոկոսները բռնագանձելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշման դեմ պատասխանող Ալլա Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2016 թվականի փետրվարի 22-ին Գրենա Միրզաջանյանը հայց է հարուցել դատարան ընդդեմ Ալլա Խաչատրյանի՝ որպես պարտքի գումար 560.000 ՀՀ դրամ և այդ գումարի նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու մասին: Գրենա Միրզաջանյանը միաժամանակ միջնորդել է, որպես հայցի ապահովման միջոց, հայցագնի չափով արգելանք դնել Ալլա Խաչատրյանին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/ դատավոր Ռ.Ջեհանգիրյանի 23.02.2016թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել, հարուցվել է քաղաքացիական գործ: Նույն օրը կայացված մեկ այլ դատական ակտով որոշվել է, որպես հայցի ապահովման միջոց, հայցագնի չափով արգելանք դնել Ալլա Խաչատրյանին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա: Առաջին աստիճանի դատարանի 2016 թվականի մայիսի 4-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է քննության:

Առաջին աստիճանի դատարանի 2016 թվականի հունիսի 8-ի վճռով հայցը բավարարվել է 500.000 ՀՀ դրամի չափով: Քանի որ 60.000 ՀՀ դրամի մասով հայցվորը դատական նիստում նվազեցրել է հայցապահանջը, գործի վարույթն այդ մասով կարճվել է հայցվորի՝ հայցի տվյալ մասից հրաժարվելու պատճառաբանությամբ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ Ալլա Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել, Առաջին աստիճանի դատարանի 2016 թվականի հունիսի 8-ի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ 2016 թվականի հոկտեմբերի 26-ին Ալլա Խաչատրյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2016 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ վերադարձվել է և ձևական

սխալները շտկելու ու վճարել բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանվել է 25-օրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից:

2016 թվականի դեկտեմբերի 7-ին Ալլա Խաչատրյանը կրկին ներկայացրել է վճարել բողոք, որը Գերագույն դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճարել բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի կոպիտ խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ կետի և 49-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատաճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Հայցվորից, որպես փոխառություն, որևէ գումար ինքը չի ստացել: Իրենց միջև փոխառության պայմանագիր չի կնքվել: Ստորադաս դատարանների դատական ակտերի հիմքում դրվել են հայցվոր Գրենա Միրզաջանյանի ցուցումները և դրամական գումարներն իրեն փոխանցելու մասին փոստային առաքումների անդորրագրերը: Սակայն Գրենա Միրզաջանյանի ցուցումները կեղծ է, իսկ փոստային առաքումներում ուղղակիորեն նշված է, որ այդ գումարներն իրեն փոխանցվել են որպես դրամական օգնություն: Պարզ է, որ նյութական օգնության դեպքում հայցվորը չի կարող պահանջել, որ վերադարձվի օգնությունը: Այսպիսով, եթե ստորադաս դատարանները համարում են, որ ինքը չի կարողացել ապացուցել իր նշած այն հանգամանքը, որ իրականում հայցվորն է եղել իրեն պարտք, ինչն էլ վերադարձրել է փոստային առաքումների միջոցով, ապա առաջին հերթին հայցվորն ինքը չի կարողացել ապացուցել իր կողմից ներկայացված պահանջը: Գրենա Միրզաջանյանի ներկայացրած փոստային անդորրագրերը նրա հայցապահանջի հիմքում ընկած փաստերը հաստատող վերաբերելի ապացույցներ համարվել չեն կարող: Հետևաբար՝ այդ պարագայում ստորադաս դատարանները պարտավոր էին ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ կետի ուժով վեճի առարկա գումարն իբրև փոխառություն հանձնելու փաստի առկայությունը վիճելի մնալու բացասական հետևանքները կիրառելու հայցվորի, այլ ոչ թե իր նկատմամբ: Մինչդեռ պարզ է, որ հայցվորը որպես փոխառություն չի տվել նշված գումարները. հայցվորն ինքը դատական նիստում հայտարարել է. «<Ալլան ինչ արել է ինձ համար, ինչ արել եմ ես նրա համար, երկուսիս էլ հալալ լինի>>»:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3.Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. Գրենա Միրզաջանյանը դատարան ներկայացրած իր հայցապահանջը հիմնավորել է հետևյալ կերպ.

Ինքը պատասխանող Ալլա Խաչատրյանին, որպես պարտք, 2013 թվականի փետրվարի 8-ին «<Հայբիզնեսբանկ>> փակ բաժնետիրական ընկերության միջոցով ուղարկել է 300.000 ՀՀ դրամ գումար, 2014 թվականի ապրիլի 4-ին «<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերության միջոցով ուղարկել է 60.000 ՀՀ դրամ գումար, իսկ 2015 թվականի հունվարի 21-ին Ալլա Խաչատրյանի խնդրանքով նրա ընկերուհի Ալետա Աղաջանյանին է տվել 200.000 ՀՀ դրամ գումար, որը վերջինս «<Արցախբանկ>> փակ բաժնետիրական

ընկերության միջոցով ուղարկել է Ալլա Խաչատրյանին: Այսպիսով, Ալլա Խաչատրյանին պարտքով տվել է ընդհանուրը 560.000 ՀՀ դրամ գումար, որը Ալլա Խաչատրյանը ներկայումս հրաժարվում է վերադարձնել: 2016 թվականի հունվարի 21-ին նշված գումարը պատասխանողից հետ ստանալու նպատակով դիմել է ԼՂՀ ոստիկանության Մարտունու շրջբաժին, որտեղից գրությամբ իրեն հայտնել են, որ այդ հարցով կարող է դիմել դատարան:

2. Որպես հայցապահանջը հիմնավորող ապացույց՝ հայցվորը ներկայացրել է «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով իր կողմից պատասխանող Խաչատրյանի անվամբ 300.000 ՀՀ դրամ գումար ուղարկելու վերաբերյալ N 003562 /620421167/ առ 08.02.2013թ. վճարման հանձնարարագրի անդորրագիրը և «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով Ալետա Աղաջանյանի կողմից պատասխանող Խաչատրյանի անվամբ 200.000 ՀՀ դրամ գումար ուղարկելու վերաբերյալ N 150121011602021 առ 21.01.2015թ. անդորրագիրը:

3. Ալլա Խաչատրյանը հայցը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ նշված գումարները Գրենա Միրզաջանյանն իրեն որպես պարտք չի ուղարկել, ընդհակառակը, հայցվորն ինքն է իրեն պարտք եղել ու վերադարձրել է պարտքը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և դատական սխալի առկայության հանգամանքներով:

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելով վճռաբեկ բողոքը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն բողոքով Գերագույն դատարանի առջև բարձրացված հարցերը վերաբերում են փոխառության վեճերով կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու ու ապացույցների գնահատման կանոններին:

Քաղաքացիական դատավարությունում ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը ձևակերպված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը չի գործում, եթե օրենքով նախատեսված է ապացուցման պարտականությունը վերաբաշխելու հատուկ /մասնավոր/ կանոն:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Այսինքն՝ քաղաքացիական դատավարությունում գործում է այն կանխավարկածը, համաձայն որի՝ ապացուցման պարտականությունն առաջին հերթին հայցվորի պարտականությունն է, և պատասխանողը չի կրում ապացուցման պարտականություն, եթե հայցվորը չի ապացուցել իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները: Ըստ որում, եթե ներկայացված ապացույցները բավարար են, ապա էական նշանակություն չունի, թե որ կողմն է ներկայացրել ապացույցները: Ապացույցների անբավարարության պայմաններում է, որ ապացուցման պարտականությունը սահմանող նորմերը ձեռք են բերում վճռորոշ նշանակություն:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը /փոխատուն/ մյուս կողմի /փոխառուի/ սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ /փոխառության գումարը/

կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ գույք հանձնելու պահից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ, իսկ 3-րդ մասի համաձայն՝ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առաջինն է:

Հետևում է, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից:

Փոխառության իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերից հետևում է նաև, որ օրենսդիրն այդ վեճերով ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոն չի սահմանել, հետևաբար՝ գործում է ընդհանուր կանոնը:

Սույն գործով Գրենա Միրզաջանյանի կողմից ներկայացված հայցի առարկան 500.000 ՀՀ դրամ գումարը բռնագանձելու պահանջն է, իսկ հայցի հիմքը որպես փոխառություն Ալլա Խաչատրյանին 2013 թվականի փետրվարի 8-ին 300.000 ՀՀ դրամ գումար, իսկ 2015 թվականի հունվարի 21-ին 200.000 ՀՀ դրամ գումար հանձնելու, ինչպես նաև այդ գումարները վերջինիս կողմից չվերադարձնելու փաստերն են:

Ալլա Խաչատրյանը հայցը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ նշված գումարները Գրենա Միրզաջանյանն իրեն որպես փոխառություն չի հատկացրել, ընդհակառակը, վերջինս է եղել իրեն պարտք, ու պարտքը վերադարձրել է: Հայցվոր Գրենա Միրզաջանյանն առարկել է նշված պատճառաբանության դեմ /այդ թվում՝ գրավոր ձևով/՝ հայտնելով, որ բացառված է, որ պատասխանողն իրեն պարտք տա. ամբողջ գյուղն է տեղյակ, որ պատասխանողը՝ ընտանյոք հանդերձ, նյութական խիստ կարիքի մեջ է, իսկ ինքը ոչ մի կարիք չունի, որ իր և հայցվորի միջև փոխառության հարաբերություններ երբևէ չեն եղել, այլ եղել են այլ՝ ոչ իրավական բնույթի հարաբերություններ, և ինքը շատ ավելի գումարներ է ծախսել Ալլա Խաչատրյանի վրա:

Սույն գործով Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է՝ գտնելով, որ <<հայցվորի և պատասխանողի միջև 08.02.2013թ. և 21.01.2015թ. Քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևով կնքվել են փոխառության պայմանագրեր, որոնցով պատասխանողը հայցվորից ստացել է համապատասխանաբար 300.000 և 200.000 ՀՀ դրամ>>: Առաջին ատյանի դատարանն այդ եզրակացությունը հիմնավորել է նրանով, որ թիվ 003562 վճարման անդորրագրի համաձայն՝ 08.02.2013թ. հայցվորը պատասխանողին բանկային փոխանցման միջոցով ուղարկել է 300.000 ՀՀ դրամ, թիվ 15012101160221 անդորրագրով՝ 200.000 ՀՀ դրամ, իսկ պատասխանողը չի ապացուցել իր առարկությունն այն մասին, որ իրականում գումարներն իրեն փոխանցվել են ոչ թե իբրև փոխառություն, այլ իբրև իր կողմից <<հայցվորին տրված փոխառության գումարի վերադարձ>>:

Վերաքննիչ դատարանը, կարևորելով այն, որ <<պատասխանողը չի ապացուցել հայցվորին փոխառությամբ գումար տալու փաստը>> ու, հղում կատարելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ կետին, համաձայն որի՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ

բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, իրավաչափ է համարել Առաջին ատյանի դատարանի հիմնավորումները ու մերժել Ալլա Խաչատրյանի վերաքննիչ բողոքը:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները խախտել են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի պահանջները. սույն գործով ապացուցման բեռը դրվել է միայն պատասխանող Ալլա Խաչատրյանի վրա՝ այն դեպքում, որ ապացուցման պարտականությունն առաջին հերթին հայցվորի պարտականությունն է, և պատասխանողը չի կրում ապացուցման պարտականություն, եթե հայցվորը չի ապացուցել իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները: Սույն գործով հայցվորը բոլորովին չի կատարել հայցի հիմքում դրված փաստերն ապացուցելու իր պարտականությունը: Ավելին, ի հիմնավորումն իբր կնքված փոխառության պայմանագրի՝ հայցվորի ներկայացրած անդորրագրերից հետևում է, որ գումարներն Ալլա Խաչատրյանին փոխանցվել են «<որպես դրամական օգնություն>>», ինչը հաստատել է նաև հայցվոր Գրենա Միրզաջանյանն ինքը՝ գրավոր ձևով ներկայացրած առարկությունում /գ. թ. 34/, որը դատաքննության ժամանակ չի հերքվել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նման հանգամանքներում Գերագույն դատարանը սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը, հաշվի առնելով, որ գործի նյութերը թույլ են տալիս կայացնելու որոշում՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 4-րդ կետը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, անհրաժեշտ է համարում բեկանելու և փոփոխելու բողոքարկվող որոշումը և հայցը մերժելու:

Գործը ողջամիտ ժամկետում քննելը և անհարկի ձգձգումներից խուսափելը նաև ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի և «<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջն է:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են այդ հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են հայցադիմումի համար հայցվորի վճարած, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պատասխանողի վճարած պետական տուրքի գումարներից, իսկ հայցը ենթակա է մերժման, Գերագույն դատարանը գտնում է, որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումարները ենթակա են գանձման Գրենա Միրզաջանյանից՝ հոգուտ Ալլա Խաչատրյանի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ալլա Վլադիմիրի Խաչատրյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը բեկանել և փոփոխել. հայցը մերժել:

2. Գրենա Աշոտի Միրզաջանյանից հոգուտ Ալլա Վլադիմիրի Խաչատրյանի բռնագանձել 33.600 /երեսուներեք հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԱՐԶՈՒՄՄԱՆՅԱՆ
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանի որոշումը անհիմն է և ապօրինի, քանի որ կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա ու դրանք, որպես բողոքարկվող դատական ակտի բեկանման հիմք հանդիսացող առերևույթ դատական սխալներ, առաջացրել են ծանր հետևանքներ:

Նախ, Վերաքննիչ դատարանը առանց պատշաճ իրավական գնահատական տալու գործում եղած ապացույցներին, իրարամերժ ու հակասական փաստերի ու հանգամանքների առկայության պարագայում, չպարզելով գործի իրական հանգամանքները, հանգել է սխալ հետևության և ճիշտ ընտրելով ու վկայակոչելով կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերը, թույլ է տվել դրանց սխալ կիրառում, որն արտահայտվել է նրանում, որ կայացված որոշման մեջ հղում կատարելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածով սահմանված՝ պատճառված վնասի համար պատասխանատվության ընդհանուր պարտադիր պայմաններին, անտեսել է այն կարևոր հանգամանքը, որ պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառով անձի կողմից, մինչդեռ գործի քննությամբ չի հաստատվել, որ հայցվորին վնասը լրիվ ծավալով պատճառվել է հենց իր անասունների կողմից:

Վերաքննիչ դատարանը որոշման «Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը» բաժնում, ի թիվս այլ փաստերի, ճիշտ ներկայացնելով այն հանգամանքը, որ «պատասխանողը չի վիճարկել, որ իրեն պատկանող 2 գլուխ ձիերը մուտք են գործել հայցվորի մշակված հողամաս և նյութական վնաս պատճառել վերջինիս, նշելով սակայն, որ վնասը պատճառվել է ոչ միայն իր ձիերի, այլ նաև այլ անձանց պատկանող մի քանի գլուխ ձիերի կողմից», անհասկանալի նկատառումներից ելնելով, հաջորդ՝ 7-րդ ենթակետում արձանագրել է, որ «գործում բացակայում է պատասխանողի վկայակոչած փաստը հիմնավորող որևէ ապացույց», այն դեպքում, որ ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ իր լիակատար հաստատումն է գտել այն իրողությունը, որ վնասը պատճառվել է ոչ միայն իրեն պատկանող երկու գլուխ ձիերի /ավելի ստույգ՝ ձիու և մտրուկի/ կողմից, այլ նաև այլ անձանց՝ մասնավորապես Տոնաշեն գյուղի բնակիչներին պատկանող թվով 8-10 գլուխ ձիերի կողմից ցանված դաշտը արածավերելու հետևանքով:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով գործում առկա ապացույցները՝ մասնավորապես հայցվորի և իր կողմից հրավիրված վկաների ցուցումները, ակնհայտ սխալ է թույլ տվել, քանի որ 2016թ. հունվարի 24-ին կազմված ակտում նշված վնասը պատճառվել է առավելապես այլ անձանց պատկանող թվով 8-10 գլուխ ձիերի բավական տևական ժամանակահատվածում արածավերելու հետևանքով ու հանգել է սխալ հետևության, ինչը և հիմք է հանդիսացել անհիմն և ապօրինի դատական ակտ կայացնելու համար:

Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նաև դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք արտահայտվել են նրանում, որ հայցվոր կողմը չի ապացուցել իր վկայակոչած փաստերը, ինչի պատճառով վիճելի է մնացել իր՝ որպես պատասխանողի կողմից հայցվող գումարի չափով հայցվորին լրիվ ծավալով գույքային վնաս պատճառելու հանգամանքը, որի բացասական հետևանքները՝ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, կրում է գործով հայցվոր կողմը, իսկ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա հետևանքները կրում է փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, ուստի Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը և գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վերաքննիչ դատարանի նախագահ Կարեն Ղարայանի 2016թ. սեպտեմբերի 21-ի մակագրության թերթիկի համաձայն՝ ՇԻԴ 0273/02/16 քաղաքացիական գործով պատասխանող Արթուր Վալերիի Աբրահամյանի վերաքննիչ բողոքի քննությունը հանձնարարվել է Վերաքննիչ դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյան, դատավորներ Հասմիկ Խաչատրյան, Կարեն Սաղյան /գ.թ.47/:

2. Վերաքննիչ դատարանը՝ նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյան, դատավորներ Հասմիկ Խաչատրյան և Կարեն Սաղյան կազմով 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ պատասխանող Արթուր Վալերիի Աբրահամյանի վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և գործի դատաքննությունը նշանակել 2016թ. հոկտեմբերի 19-ին, ժամը 12-ին /գ.թ.55/:

3. Վերաքննիչ դատարանի նախագահ Կարեն Ղարայանի թիվ 16 առ 14 հոկտեմբերի 2016թ. հրամանով Վերաքննիչ դատարանի դատավոր Կարեն Սաղյանը 2016թ. հոկտեմբերի 16-ից մինչև 22-ը ներառյալ՝ 7 օր տևողությամբ գործուղվել է ՀՀ «Արդարադատության Ակադեմիա» ՊՈԱԿ /գ.թ.59/, որի պատճառով քաղաքացիական գործի քննությունը հետաձգվել ու նշանակվել է 2016թ. նոյեմբերի 8-ին, ժամը 11-ին /գ.թ.65/:

4. Վերաքննիչ դատարանի նախագահ Կարեն Ղարայանի 2016 թվականի նոյեմբերի 8-ի գրությամբ դատավոր Հասմիկ Խաչատրյանի փոխարեն դատական կազմ է մտցվել դատավոր Հրայր Աբրահամյանը /գ.թ.63/:

5. Համաձայն 08.11.2016թ. դատական նիստի արձանագրության՝ բողոքարկվող գործի դատաքննությունը սկսվել և ավարտվել է նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյան, դատավորներ Հրայր Աբրահամյան, Կարեն Սաղյան կազմով /գ.թ.67/, սակայն 22.11.2016թ. դատական ակտը ստորագրվել և հրապարակվել է նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյան, դատավորներ Հասմիկ Խաչատրյան, Կարեն Սաղյան կազմով /գ.թ.69,78/:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար, ուստի սույն վճռաբեկ բողոքի քննության հետ կապված, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե՛ վճռաբեկ բողոքում չնշված, բայց բողոքարկված գործում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքի /հիմքերի/ առկայության դեպքում, Գերագույն դատարանը պարտավոր է, արդյոք, անդրադառնալ այդ հիմքին՝ դուրս գալով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և այդ հիմքով բեկանել դատական ակտը:

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ ԼՂՀ Սահմանադրության /այսուհետ՝ Սահմանադրություն/ մի քանի նորմերի, որոնք գերակա և պարտադիր են Սահմանադրությունից բխող բոլոր իրավական ակտերի համար:

Սահմանադրության 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է:

Օրինականության սկզբունքը, որը համընդհանուր է իրավունքի բոլոր ճյուղերի համար, ամրագրված է Սահմանադրության մի շարք նորմերում, իսկ

ընդհանուր տեսքով՝ Սահմանադրության 6-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Օրինականության սկզբունքը դատարանների համար նշանակում է, որ դատարանների բոլոր որոշումները և դատավարական գործողությունները պետք է համապատասխանեն ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերին, այսինքն՝ օրենքին: Այլ կերպ ասած, օրինականության սկզբունքը պահանջ է դատարաններին՝ իրենց գործունեության մեջ անշեղորեն ղեկավարվել նյութական և դատավարական իրավունքի նորմերով, առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերով:

Օրինականության սկզբունքը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում /այսուհետ՝ նաև Օրենսգիրք/ չի առանձնացված, բայց նրա նշանակությունը և ազդեցությունն արտացոլված է Օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում և այն վերադաս դատարանի համար չափանիշ է՝ ստորադաս դատարանի դատական ակտի օրինական և հիմնավորված լինելը ստուգելու համար: Այսպես, Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասն արձանագրում է, որ դատարանը վեճերը և այլ գործերը լուծում է Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա: Օրենսգրքի 121-րդ հոդվածից նկատելի է, որ դատարանի վճռին ներկայացվող հիմնական պահանջներից մեկը՝ օրինականությունն է: Այստեղից բխում է, որ յուրաքանչյուր անհիմն վճիռ պետք է անօրինական համարել, իսկ անօրինական դատական որոշումը խաթարում է արդարադատության բուն էությունը և սասանում դատական իշխանության հեղինակությունը:

Օրինականության սկզբունքի իրացման երաշխիքներից մեկն էլ դատական սխալի վերացումն է: Օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված վճռաբեկ բողոք բերելու հիմքերից մեկը դատական սխալն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Այդ առումով, օրենսդիրն Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասում նշել է այն անվերապահ կամ պարտադիր հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման: Փաստորեն, Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասը հրամայական և անվերապահ բնույթ ունի:

Գերագույն դատարանը շեշտում է, որ արդարադատության իրականացման տեսանկյունից Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի և 252-րդ հոդվածի նորմերը չեն հակասում, այլ՝ փոխլրացնում են միմյանց և ամեն պարագայում ուղղված են ստորադաս դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը վեր հանելուն և ուղղելուն:

Այսպիսով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկության կարգով քաղաքացիական գործերով դատական ակտերի վերանայման վարույթը միանշանակ չպետք է կախման մեջ դնել վճռաբեկ բողոքի հիմքերից և հիմնավորումներից, քանի որ բողոքարկված դատական ակտով քաղաքացիական դատավարության իրականացման սկզբունքների և հիմնարար կանոնների խախտման փաստերն ինքնըստինքյան կասկածի տակ են դնում նման խախտումներով ընդունված դատական ակտի օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

Շետևաբար, բողոքարկված գործով Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի /«վճիռը բեկանելու անվերապահ հիմքեր»/ առկայության դեպքում, Գերագույն դատարանը, խստորեն ղեկավարվելով օրինականության գերակայության սկզբունքով և արդարադատության վերջնական նպատակին հասնելու համար, դատական ակտի վերանայման ընթացքում չպետք է կաշկանդված լինի վճռաբեկ բողոքով:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1/ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով.

2/ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3/ վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն.

4/ վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

5/ գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Սույն որոշման 3-րդ մասում շարադրված փաստերի համաձայն՝ ՇԻԴ 0273/02/16թ. քաղաքացիական գործով պատասխանող Արթուր Վալերիի Աբրահամյանի վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյան, դատավորներ Հասմիկ Խաչատրյան, Կարեն Սաղյան կազմով, սակայն վերաքննիչ բողոքի դատաքննությունն իրականացվել է նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյան, դատավորներ Հրայր Աբրահամյան, Կարեն Սաղյան կազմով, իսկ Վերաքննիչ դատարանի 2016թ. նոյեմբերի 22-ի որոշումը ստորագրվել է նախագահող դատավոր Հովհաննես Գրիգորյանի, դատավորներ Կարեն Սաղյանի և Հասմիկ Խաչատրյանի կողմից:

Գործի փաստերի համադրման արդյունքում Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը ստորագրել է ոչ այն դատավորը, որն այն կայացրել է, քանի որ գործի դատաքննությանը մասնակցել է դատավոր Հրայր Աբրահամյանը, սակայն նրա փոխարեն հրապարակված որոշումը ստորագրել է դատավոր Հասմիկ Խաչատրյանը, որը չի մասնակցել վերաքննիչ բողոքի դատաքննությանը: Տվյալ դեպքում առկա է Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերը՝ դատական ակտը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն և դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ:

Սույն գործով վերը վերլուծության ենթարկված հանգամանքների համակացությունը Գերագույն դատարանին բերում է այն եզրահանգման, որ բողոքարկվող դատական ակտը կայացվել է Վերաքննիչ դատարանի ոչ օրինական դատական կազմի կողմից, քանի որ դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ և դատական ակտը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն:

Այսպիսով, բողոքարկվող գործում Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտված լինելու վերաբերյալ հիմնավորումներին, ապա Գերագույն դատարանը Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի խախտված լինելու պայմաններում դրանց չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Արթուր Վալերիի Աբրահամյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ**

2016 թվականի հունիսի 29-ին «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել 1.687.896,1 ՀՀ դրամի չափով ապահովված պահանջ՝ պահանջների ցուցակում ընդգրկելու խնդրանքով:

Առաջին ատյանի դատարանը /դատավոր Կ.Մելքումյան/ 2016 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի պահանջը հաստատել է և որպես ստորադաս չապահովված պահանջ ընդգրկել «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով սահմանված հերթում: Նշված որոշումը 2016 թվականի հուլիսի 6-ին ուղարկվել է Բանկի «Ստեփանակերտ» մասնաճյուղ:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ սնանկ ճանաչված «Նիկոլ» ՍՊԸ-ի նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ և «Նիկոլ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին հանձնարարվել է արգելանք դնել «Նիկոլ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա: Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հուլիսի 29-ի մեկ այլ որոշմամբ «Նիկոլ» ՍՊԸ-ի գործունեությունը, գույքը կառավարելու և տնօրինելու պարտապանի բոլոր իրավունքները կասեցվել են:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ «Նիկոլ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանն ազատվել է կառավարչի պաշտոնից և սնանկության գործի վարույթը կասեցվել է մինչև կասեցման հիմքերը վերանայը /այսինքն՝ մինչև նոր կառավարիչ նշանակելը/: Նշված որոշումը 2016 թվականի սեպտեմբերի 7-ին ուղարկվել է Բանկին:

Բանկի կողմից 2016 թվականի սեպտեմբերի 24-ին դիմում է ներկայացվել դատարան՝ պահանջի հաստատման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին:

2016 թվականի հոկտեմբերի 17-ին Բանկի գլխամասային գրասենյակ է մուտքագրվել դատարանի պատասխանն այն մասին, որ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի պահանջը հաստատվել է և որպես ստորադաս չապահովված պահանջ ընդգրկվել «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով սահմանված հերթում, և որ դատարանի որոշումն ուղարկվել է Բանկի «Ստեփանակերտ» մասնաճյուղ:

Բանկի գլխամասային գրասենյակի պահանջով «Ստեփանակերտ» մասնաճյուղը 2016 թվականի հոկտեմբերի 25-ին էլեկտրոնային փոստի միջոցով Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հուլիսի 5-ի «Պահանջը հաստատելու, ... մասին» որոշումը ուղարկել է Բանկին:

Առաջին ատյանի դատարանի նշված որոշման դեմ 2016 թվականի նոյեմբերի 5-ին փոստային ծառայության միջոցով վերաքննիչ բողոք է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա. Հարությունյանը՝ խնդրելով վերացնել Առաջին ատյանի դատարանի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերջնական ցուցակում հաստատելով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի ապահովված պահանջը 1.687.896,1 ՀՀ դրամի չափով:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ /նախագահող դատավոր Հ.Աբրահամյան, դատավորներ՝ Լ.Ավանեսյան, Հ.Գրիգորյան/ 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ 2016 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանը ոչ թե հաստատել է պահանջների վերջնական ցուցակը, այլ որոշում է կայացրել արդեն իսկ հաստատված ցուցակում «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի պահանջը ընդգրկելու մասին, ուստի նշված որոշումը չի կարող բողոքարկվել:

Բանկը Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 2016 թվականի նոյեմբերի 30-ին:

Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ 2016 թվականի դեկտեմբերի 9-ին վճռաբեկ բողոք է բերել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ իրավաբանական դեպարտամենտի տնօրեն Ա.Տեպանոսյանը /բողոքը Գերագույն դատարան մուտք է գործել 2016 թվականի դեկտեմբերի 16-ին/:

Գերագույն դատարանի 2016 թվականի հունվարի 17-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը որոշումը կայացնելիս խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին, 134-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի, 136-րդ, 241-րդ հոդվածների, 240-րդ հոդվածի 1-ին մասի, «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքի 85-րդ, 43-րդ, 82-րդ հոդվածների 1-ին մասերի, 22-րդ հոդվածի 5-րդ մասի, 46-րդ հոդվածի 9-րդ մասի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 226-րդ հոդվածի 1-3-րդ մասերի պահանջները:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Մեջբերելով վերը նշված իրավական նորմերի բովանդակությունը, բողոքաբերը հանգել է այն եզրակացության, որ հաստատված ցուցակում նոր պահանջ հաստատելն ինքնին փոխում է սկզբնական ցուցակի բովանդակությունը, հետևաբար պարտատերը իրավունք ունի օգտվել վերջնական ցուցակի դեմ բողոք ներկայացնելու իր իրավունքից:

Բողոքաբերը նշել է, որ եթե դատարանը նշված որոշմամբ վերջնական ցուցակ չի հաստատել, ապա որոշումը կայացնելիս ինչ իրավանորմերով է առաջնորդվել և ո՞ր իրավական ակտով է հիմնավորել նշված որոշման դեմ բողոք ներկայացնելու արգելքը:

Ըստ բողոքի Առաջին աստիճանի դատարանի որոշումը օրենքով սահմանված ժամկետում Բանկին չի ուղարկվել, ուղարկվել է «Ստեփանակերտ» մասնաճյուղ: Մինչդեռ մասնաճյուղն իրավաբանական անձ չէ, և Բանկի «Ստեփանակերտ» մասնաճյուղը որևէ կապ չունի սույն գործի հետ, նույնիսկ գործարքը նշված մասնաճյուղում չի իրականացվել, այն կնքվել է «Խաչեն» մասնաճյուղում, որը գործում է մեկ ուրիշ հասցեով:

Ըստ բողոքի՝ Եվրոպայի խորհուրդի նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R/95/ 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի «ա» կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի /երկրորդ աստիճանի դատարան/ կողմից ստորադաս դատարանի ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Դատավարությունում կողմերի մրցակցության սկզբունքը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը պահանջների հաստատման վերջնական ցուցակում «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի պահանջը հաստատելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշմանը լիարժեք իրավական գնահատական չի տվել, Բանկի իրավունքների խախտման հանգամանքներին չի անդրադարձել և ընդամենը հիմք է ընդունել «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և 46-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները և բողոքը վերադարձրել:

Դատարանը պետք է կիրառեր «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առաջին հերթին բավարարվում են ապահովված պարտատերերի պահանջները և չպետք է կիրառեր նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ Բանկն իր պարտավորությունների կատարումը ապահովելով համապատասխան գրավով, արդեն իսկ համարվում է ապահովված պարտատեր: Բանկը՝ որպես ապահովված պահանջ ունեցող պարտատեր, կարող է պահանջել անմիջապես

բավարարել իր պահանջները գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, ինչպես նաև պարտքի դիմաց այն ընդունել ի սեփականություն:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ առկա է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքը, այն է՝ դատարանն առերևույթ թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը և հաստատել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի պահանջը «Նիկոլ» ՍՊԸ-ի նկատմամբ՝ որպես ապահովված պահանջ՝ 1.687.896,1 ՀՀ դրամի չափով:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ տրված դատական սխալի առկայությամբ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը/:

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և վերացնել բողոքարկվող որոշումը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության երկրորդ գլխի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով որ այդ իրավունքները, ազատությունները և պարտականությունները իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը նույնպես ամրագրում է արդար դատական քննության իրավունքը, որի բաղկացուցիչ մասն է կազմում դատական ակտը վերադաս դատական ատյանում բողոքարկելու իրավունքը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավունքների պաշտպանության համար դատական ակտերը բողոքարկելու իրավունք ունենալը դեռ չի նշանակում, որ ցանկացած անձ, ցանկացած ձևով կարող է բողոքարկել դատարանի կայացրած ցանկացած որոշում: Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության օրենսդրությամբ դրա համար սահմանված են որոշակի նախապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն վերաքննիչ և վճռաբեկ բողոքները համարվում են իրավաչափ և ընթացքավորվում: Քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքը բացարձակ չէ և արդարացված որոշակի հանգամանքներով՝ որոշ դատական ակտերով վերաքննության իրավունքը կարող է սահմանափակվել: Սակայն վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը:

Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության

ստուգումն է: Նշված ինստիտուտն այն հիմնական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորագրած դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի դատավարական երաշխիքների պահպանումը:

Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված բողոքարկման ընթացակարգը պետք է հստակ ձևակերպված լինի, ունենա կիրառության հետևողական պրակտիկա և անձին պետք է ընձեռի բողոքարկելու հստակ և մատչելի իրավունք: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Այն դեպքերում, երբ նախատեսված են բողոքարկման ընթացակարգեր, բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում.../Բրուսլա Գոմեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի գործով, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը.../»:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պատասխանի առաջին հերթին այն իրավական հարցին, թե Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը ենթակա է արդյոք վերաքննության կարգով բողոքարկման, թե՛ ոչ, արդյոք օրենքը չի նախատեսել տվյալ որոշումը բողոքարկելու հնարավորություն: Այդ հարցին պատասխանելուց հետո հնարավոր կլինի պատասխանել այն հարցին, թե արդյոք իրավաչափ է Վերաքննիչ դատարանի որոշումը Բանկի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ «Այլ օրենքներում /բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների/ պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

Նշված իրավական նորմի բովանդակությունից բխում է, որ սույն գործով ծագած իրավահարաբերությունների կարգավորումը պետք է փնտրել ԼՂՀ-ում սնանկության վարույթը կարգավորող օրենքում, որպիսին հանդիսացել է բողոքարկված դատական ակտերը կայացնելու պահին գործող «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքը /այսուհետ՝ նաև Օրենք/:

Օրենքի՝ «Սնանկության գործի ընթացքում կայացված դատական ակտերի՝ բողոքարկումը» վերտառությամբ 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանց կայացվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում՝ վերաքննության կարգով, միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում: Մնացած դեպքերում դատավորի կայացրած որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապահովված են համարվում պարտապանի՝ գրավադրված գույքով /այդ թվում՝ երրորդ անձանց պատկանող/ ապահովված պահանջները: Ապահովված պահանջ ունեցող պարտատերը /այսուհետ՝ ապահովված պարտատեր/ կարող է պահանջել անմիջապես բավարարել իր պահանջները գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից»: «Չապահովված պահանջները» վերտառությամբ Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ գրավով չապահովված բոլոր պահանջները կամ ապահովված պահանջների չապահովված մասերը համարվում են չապահովված պահանջներ:

Պահանջների բավարարման հերթականությունը սահմանված է Օրենքի 82-րդ հոդվածում: Նշված հոդվածում ապահովված պահանջները դասվում են առաջին հերթի պահանջների շարքին /82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը/:

Օրենքի՝ «Պահանջների հաստատումը» վերտառությամբ 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են

դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում: Նշված հոդվածի 5-8-րդ մասերը սահմանում են, որ նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ նույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան: Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատավորին, պարտապանին և բոլոր պարտատերերին: Նախնական ցուցակն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, դատավորը հրավիրում է դատական նիստ՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու համար, որի տեղի և ժամանակի մասին կառավարիչն, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նիստից առնվազն 2 օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:... Նիստում նախնական ցուցակի վերաբերյալ առարկություններ չներկայացվելու դեպքում դատավորը որոշում է կայացնում պարտատերերի պահանջների ցուցակը հաստատելու մասին /վերջնական ցուցակ/: Եթե պահանջն առարկվում է, ապա դատավորը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունը: Առարկությունների քննարկման արդյունքում դատավորը որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Ինչպես հետևում է նշված իրավանորմի բովանդակությունից՝ օրենսդիրն ուղղակիորեն չի նախատեսել վերջնական ցուցակի հաստատումից հետո պարտատերերի կողմից ներկայացված պահանջների ընդունման և դրանց քննարկման արդյունքում կայացված որոշումները բողոքարկելու ընթացակարգեր: Գերագույն դատարանը դա համարում է օրենքի բաց:

Գերագույն դատարանը փաստում է, որ դատարանի դատական ակտն անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն առանց բավարարման է թողնվում այն դեպքում, երբ առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների դատական ակտերը օրինական և հիմնավորված են, իսկ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական չեն գործի համար, այսինքն՝ դատարանը ճիշտ է ընտրել, ճիշտ է մեկնաբանել և կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով իրավական նորմի կիրառումը միշտ կապված է նորմերի մեկնաբանության հետ, այսինքն՝ դատարանի հատուկ գործառույթի հետ, որը կապված է կիրառման ենթակա նորմի իմաստի բացահայտման /պարզաբանման/ հետ: Իրավունքի բացի դեպքում օգտագործվում է իրավունքի կիրառման գուցադրության կարգը: Դա իրավունքի ընդհանուր սկզբունքների և իմաստի հիման վրա կոնկրետ գործի վերաբերյալ որոշման ընդունումն է: Մակայն հաճախ դատարանները կիրառում են օրենքի գուցադրությունը, որը ենթադրում է կոնկրետ իրավաբանական գործի լուծումն այնպիսի իրավական նորմի հիման վրա, որը նախատեսված է ոչ թե տվյալ, այլ նման դեպքերի համար: Այսինքն՝ տվյալ հարաբերությունը կիրառվող նորմով անմիջապես չի կարգավորվում, նշված նորմը կարգավորում է այլ, բայց նույնանման, միասեռ հարաբերություններ:

Վերոշարադրյալից հետևում է, որ դատարանի խնդիրն է պարզաբանել /մեկնաբանել/ կիրառվող նորմը, ինչպես նաև իրավունքի բացը հաղթահարել իրավունքի կիրառման գուցադրության /անալոգիայի/ միջոցով:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Օրենքի 46-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ եթե պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման, իսկ լրացուցիչ պահանջ ներկայացնելով արդեն իսկ

փոխվում է սկզբնական «վերջնական ցուցակի» բովանդակությունը և վերջնական է համարվում լրացված ցուցակը, ապա դատարանի տվյալ որոշումը ևս ենթակա է բողոքարկման:

Գերագույն դատարանը փաստում է, որ Օրենքի վերը նշված անհատականություններն արդեն իսկ վերացվել են ԼՂՀ ԱԺ կողմից 30.11.2016 թվականին ընդունված «Մասնկության մասին» ԼՂՀ նոր օրենքով, որի 59-րդ հոդվածի 8-10-րդ մասերի բովանդակությունից բխում է, որ «8. ...Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել: 9. Պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո դատարան ներկայացված նոր պահանջները և պահանջների փոփոխությունները դատարանը հանձնում է կառավարչին...: 10. Եթե պահանջը կամ պահանջի փոփոխությունն առարկվում է, ապա դատավորը...հրավիրում է դատական նիստ...: Առարկությունների քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:»

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հունիսի 10-ի որոշմամբ հաստատել է «Նիկոլ» ՍՊԸ-ի պահանջների վերջնական ցուցակը /ի դեպ՝ առանց տեղյակ պահելու Բանկին/: Առաջին ատյանի դատարանն իր 2016 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ, դեկավարվելով «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքի 46-րդ և 85-րդ հոդվածներով, Բանկի կողմից ներկայացված պահանջը համարել է ստորադաս չապահովված պահանջ և ընդգրկել Օրենքի 82-րդ հոդվածի առաջին մասի «թ» կետով սահմանված հերթում:

Վերաքննիչ դատարանը, խախտելով իրավունքի գերակայության սկզբունքը, չվերլուծելով կիրառման ենթակա իրավանորմերը, վերադարձրել է Բանկի վերաքննիչ բողոքը, արձանագրելով, որ «ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հուլիսի 5-ին ոչ թե՛ հաստատել է պահանջների վերջնական ցուցակը /այն կայացվել է ավելի վաղ՝ 2016 թվականի հունիսի 10-ին/, այլ որոշում է կայացրել արդեն իսկ հաստատված ցուցակում «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության պահանջն ընդգրկելու մասին: Վերջինիս բողոքարկման հնարավորությունը ԼՂՀ օրենսդրությունը, մասնավորապես, «Անվճարունակության /սնանկության/ մասին» ԼՂՀ օրենքը չի նախատեսել:»:

Վերոշարադրյալ պատճառաբանությունների լույսի ներքո գնահատելով վերանայվող որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սահմանափակելով Բանկի՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը, ըստ էության զրկել է Բանկին իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն անհիմն է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և վերադարձրել վերաքննիչ բողոքը: Հետևաբար, հիմնավոր է բողոքի փաստարկը՝ դատավարական նորմերի խախտման մասին: Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը խախտված /սխալ կիրառված/ լինելու պայմաններում Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին չի անդրադառնում, հաշվի առնելով, որ վերաքննության կարգով Բանկի վերաքննիչ բողոքի պահանջը ըստ էության չի քննվել, և Վերաքննիչ դատարանն այդ հիմքերին գնահատական չի տվել:

Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորությունը, համաձայն որի՝ միջանկյալ դատական ակտերի վերանայումից հետո Գերագույն դատարանը...կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, և վերացնել

Վերաքննիչ դատարանի՝ Բանկի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 22.11.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**